



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԱԱՐԿԱ
ՄՈՒՐԱ ՄԵԼԻՔ

891.995
Մ-28



БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР





Անվան ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՑՀԱ. 99 Մ

16-28

ԱՐ.

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

30 MAY 2011

Լ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ
ՅԵՎ
ՄԱՐԱ. ՄԵԼԻՔ

Դրամատիֆական պոյեմ դյուցազնական
Ժամանակներից

ՀԱՅՊԵՏՀՐԱՅԻ
ՅԵՐԵՎԱՆ 1940

24.06.2013

11063

Л. МАНВЕЛЯН
Д А В И Д
И
МСРА МЕЛИК
Армгиз, Ереван 1940



844853

ԼԵՎՈՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

(1864—1919)

Անցյալ դարի հայ նշանավոր դրող և մանկավարժ Լեվոն Մանվելյանը ծնվել է Ներքին Ադուլիսում։ Նա աչք և բացել ունելոր և կուլտուրական ընտանիքում։ Մանվելյանի հայրը ստանում էր «Հյուսիսաֆայլ» և «Կոռունկ» ամսագրերը, մի բան, վոր կուլտուրական և ուսումնասեր լինելու նշան էր։

Լեվոնը սովորել է Վերին Ադուլիսի դպրոցում։ Այդտեղ նրա ուսուցիչների թվումն ե յեղել Հոչակավոր վիպասան Ռաֆֆին։ Նա հետագայում շարունակում ե ուսումը Թբիլիսիի գիմնազիայում, վորն աշարտում է 1886 թվին։

Մանվելյանը բարձրագույն կրթությունն ստանում և Մոսկվայի համալրարանի Պատմա-լեզվագիտական ֆակուլտետում։

Ինչպես մեր հեղինակներից շատերին, նմանապես և Մանվելյանին բաժին է ընկել թափառական կյանքը։ Այդ կերպ են պահպանել իրենց լնտանիքների դոյությունը Պոռշյանը, Աղայանը, Ռաֆֆին, Փափազյանը և շատ ուրիշները։

1891 թ. սեպտեմբերից Մանվելյանը պաշտոնավարում և Գեղորգյան ձեմարանում իրեկ ոռուսաց լեզվի և ոռուսաց ու ընդհանուր գրականությունների դասախոս։ Այստեղ մնում է լնդամենը յերեք տարի։ Իբ

մյուս պաշտոնակիցների հետ միասին Մանվելյանն արձակվում է աշխատանքից՝ Մկրտիչ կաթողիկոսի քրառհամույքով։ Եջմիածնից նա անցնում է Շուշի, վորտեղ էրկին զրկվում է ոլաշտոնից, զոհ դառնալով յերկապառակության։ Շուշուց աեղափոխվում է Թբիլիսի ու դասեր և ստանում Ներսիսյան գլուցում, սակայն այստեղ ել յերկար չի մնում։ Շատ չանցած, Կովկասի փոխարքա Գալիցինի հրամանով նա ազատ է արձակվում։ Այս անդամ տեղափոխվում է Բագրու, իրրեալեղի մարդասիրական ընկերության զրադարձանի վարիչ։ Բագվում Մանվելյանը մնում է մինչև 1905 թ., առաջ անցնում է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական)։

Զնայած այսպիսի անապահով և անհաստատ կյանքին՝ Լեվոն Մանվելյանն աշագին դրծ և կառարել հայ գրականության համար, հանդես դարձվ Երբեք բանաստեղծ, դրամատուրգ, արձակագիր և լրաբանիչ:

Գրականության և թատրոնի սերը Մանվելյանի
մեջ առաջացել է շատ վաղ: «Քնար հայկական» բա-
նաստեղծությունների ժողովածուն առաջին գիրքն
է, վորով նա ծանոթացավ հայ բանաստեղծության:

Ալամդարյանի «Գարուն» և «Յերկու ձեռքիս յերկու մոմ» բանաստեղծությունները Մանվելյանի սիրած յերկերն եյին։ Զգալի ազդեցություն է զործել նրա վրա նաև նշանավոր հրապարակախոս Ստեփանոս Նազարյանի «Հյուսիսափայլ» ամսագիրը, վորի համարները խնամքով պահպանվում եյին Մանվելյանների բնտանիքում։

Լեզոնը թբիլսիի գիմնազիայի 4-րդ դասարանէ
աշակերտ եր, յերբ առաջին անդամ, յեղքոր միջոցով,

ծանոթացավ աշխարհահռչակ դրամատուրգ Շեքսպի-
րի զործերին։ Յեղբորից լսելով «Լիբ արքա»-ի բո-
վանդակությունը, Լեվոնը շտապում է զրադարձն,
պահանջում Շեքսպիրի յերկերի հատորը ու կարդում
մէջ հափշտակությամբ։ Շեքսպիրը դառնում է Ման-
վելանի պաշտամունքի առարկան և մղում և նրան
դեպի ստեղծագործություն։ Հանճարեղ դրամատուրգի
հետեւողությամբ Մանվելյանը գրում է մի շարք վոլ-
րերություններ անհանդ վստանավորով։

Առանձին գլոբերով լույս են տեսել կեվզն Մանկել-
յանի հետեւյալ աշխատությունները. 1). «Տիգրանու-
կի» (պիես), 2). «Զալաբինների արշավանիք» (պատ-
մվածք), 3). «Խորտակված կյանք» (վեպ), 4). «Բա-
նաստեղություններ» ա. պուրակ, 5). «Դոփ-
տոր բոշայան» (պիես), 6). «Նկարիչ Թաշճյան» (պի-
ես), 7). «Վերածնվածք» (պիես), 8). «Ինպի վեր»
(պիես), 9). «Մագդա» (պիես), 10). «Բանաստեղու-
թյուններ» ա. պուրակ:

Մանվելյանը մանրամասն մշակել է հայ նոր գրականության պատմությունը, վոր լույս և տեսել պարակուի :

լեկոն Մանվելյանի անունը խորհրդային ընթեր-
ցողներին համարյա անծանոթ ե : «Սաստիցի Դավիթը և
Սարա Մելիք» դրամատիքական պոեմի հրատարակու-
թյամբ շատ կողմերով հետաքրքրական այս հեղինակի
անունը գույք ե դայիս մոռացության փոշիների տա-
կից :

I

«Սասմո ծոեր» եպուը հայ ժողովրդի դարավոր կուլտուրայի խոշորագույն ապացույցն ե, հայ ժողո-

վրդական բանահյուսության պսակը: Համաշխարհային եպոսների շարքում «Սամա ծոկրը» ունի իր առանձնահատուկ տեղն ու բացառիկ արժեքը: Մեր բազմաթիվ նշանավոր բանահավաքների, ուսումնասիրողների, բանաստեղծների անունները սերտորեն կապված են դեղարվեստական այլ անմահ հուշարձանի հետ: Այնպիսի խոչոր դեմքեր, ինչպիսիք են թումանյանն ու Իսահակյանը, ստեղծագործական զարկ ու ներշնչում են ստացել «Սամա ծոկր»-ից, ստեղծելով հայ պոելիայի յերկու գլուխ գործոցներ՝ «Սասունցի Դավիթ» և «Սամա Մելիք»: «Սամա ծոկր» նաև գաղափարական սնունդ և ալել շատ հեղինակների, հագեցնելով մեր դրականությունը հայրենասիրության, ժողովրդասիրության և ժողովուրդների յեղայրության բարձր գաղափարներով:

Լեվոն Մանվելյանի «Սասունցի Դավիթ» և Մըսրա Մելիք» դրամատիքական պսեմբ «Սամա ծոկրի» հետաքրքրական ու ինքնատիպ մշակումներից մեկն է: Ծանոթանանք դրան:

Մեռնում ե Մհերը: Բոնակալ Մորա Մելիքն արշավում է Սասունի վրա, ավերում յերկիրը և ծանըր հարկերի տակ դնելով՝ ստրկացնում ե ժողովրդին: Վախկոտ ու ստրկամիտ Զենով Հոնանին Մորա Մելիքը կարդում է Սասունի իշխան: Հանձին նրա, Մորա Մելիքը Սասունում ստեղծում է իր բոնակաւության ազակով հենարանը: Դառնություններով և դրանքներով ե անցնում Մհերի միակ ժառանդ Դավթի մանկությունը: Զենով Հոնանի հարկի տակ: Մանուկ Դավիթը, ոժաված առասպելական ուժով, դեռևս

բենի յերկրի ազատ ու յերջանիկ անցյալի, իր հոր՝ գյուղազն Մհերի վաղեմի փառքի ու իշխանության մասին: Սակայն ժողովրդի մեջ դեռևս ազրում ե մի ուայծառ հուշ Մհերի ու նրա ժամանակների մասին: Իր կորեկի արտին ապավինած պատավ՝ Գյուղազը վորբ ու անապաստան Դավթի միակ նեցուկն է: Դավթին նա տալիս ե կյանքի փորձ և իմաստություն, նրա մեջ ներարկում ե սեր դեպի հայրենիքն ու ժողովուրդը, թշնամանք գեղի բռնակալները:

«Թե դու խելք ունես, Մհերի տղա,

Քո հոր յերկրին լավ տերություն արա,

Զենով Հոնանից մեզ ոգուտ չկա».

— Ասում ե Գյուղազը:

Գյուղազի խորհուրդներով հասունացած և կյանքի փորձով հարստացած Դավիթը, աղատագրված իր անհոգ մանկությունից, այրգում և վրտնատակ յեղած հայրենիքի վիճակով: Դատապարտելով հոր յեղբոր անտարբերությունը դեպի ժողովրդի տառապանքը, Դավիթը հաստատապես վճռում է.

«Իմ հոր յերկիրը չպիտի քողմեմ

Այս խեղն դրության, այսպես անապատ.

Ծնվել եմ ազատ և լինենք ազատ»:

Դավթի բերանով խոսում ե Սամա ամբողջ ժողովուրդը: Մորա Մելիքն ավելել է Սասունը, ստեղծայն չկ ընկճել Սասնա ժողովրդին. Նրա վողին մնացել ե ազատ ու աննվաճ, և իրու այլ վողուծնունդ, ստպարեկ ե յեկել Դավիթը: Մարութասարից զուրս բղխող լույսը ժողովրդի մեջ դեռևս չմարած աղատասիրության կրակն է: Մորա Մելիքի ձևով ավերած յերկիրը Դավիթը շենացնում է:

Սասունի ըմբռստացման լուրը չանթահար ե ա-
նում բնակալ Մորա Մելիքին։ Վրեժինդիր արար
իալիֆը Սասուն ե ուղարկում իր հարկահաններին,
ուատլիրելով անողոք լինել ապստամբ ժողովուրդի
հանդեալ, իսկ հանդուդն Դավթին շղթայակապ իրեն
ներկայացնել։

Ինթերցողի առաջ Լեվոն Մանվելյանը ժողովրդի
հարստահարության մի իրական ցնցող պատկեր ե
զծում։ Բանի ուժով ժողովրդից խլում են նրա
ունեցվածքը, գերի յեն տանում ջահել կանանց և աղ-
ջիկներին։ Դիմադրության ամենաթույլ փորձն ան-
համ անողոքաբար պատժվում է։ Ամբողջ Սասունը
սարսափի ու իրարանցման մեջ է։ Բարձրանում ե
զայրույթի ալիքը։ Ժողովրդի զլուխ անցած Դավթ-
ը, խորտակելով Զենով Հոնանի տան դռները, ներս
ե խուժում և վանդում Մորա Մելիքի հարկահաննե-
րին՝ ազատելով Սասունի հարստությունն ու դերի
կանանց։

Ամբողջ պիեսի մեջ վոչ մի տեղ այնպիսի սուր
հակադրություն չի նկատվում Դավթի և Զենով Հո-
նանի միջև, ինչպես այս պատկերում։ Սասունում
միայն Զենով Հոնանն է, վոր խուլ և ու անտարեր
դեպի հարստահարված ժողովրդի աղաղակները։ Նա
վոչ միայն չի հակադրվում Մելիքի հարկահանների
անլուր բարբարոսություններին, այլև իրախուսում
ու ոգնում ե նրանց, աշխատելով հաճոյանալ հզոր Խա-
լիֆի զորականներին, շահել նրանց ներողամտությու-
նը։ «Իսկ դու, ո՞, Հոնան, քարից ել վատթար», հան-
դիմանում ե հորեղբորը Դավթը բարկությամբ, նը-
շավակելով նրա անտարբերությունը դեպի ժողովրդ-

դի վիճակը։ Սարսահած Դավթի հանդուրէն արար-
քից, վորքրովի Զենով Հոնանը բացականչում ե. «Վա՛յ
մեղ, կորած Ենք», վորին, իրեկ պատասխան, հնչում
է ժողովրդի ցնծաղին աղաղակը. «Վո՛չ, մենք փըրկ-
դած Ենք»։

Ի հակադրություն քարից ել վատթար Զենով Հո-
նանի անտարերության, Դավթը հանգես ե բերու
վորդիական և յեղայրական սեպ դեպի գերի մայրե-
րըն ու աղջիկները։ Լսելով մարագում փակված կա-
նանց ձայները, Դավթը դիմում ե նրանց գորովան-
քով. —

«Զա՞ն, իմ քույրիկներ, զա՞ն, ազիզ մայրեր,
կանցե՛ք, քողե՛ք ձեր սուզ ու շիվան,
Ահա՛— կոտրում եմ ձեր բանտի գոթեր,
Յեվ հասավ ժամը ձեր ազատության. . .»։

Սասունի ավարին լայն ախորժակով սպասու-
Մելիքը զայրույթից մռնչում է, յերբ պարաված ու
ամոթահար կողբագին ու Զարխաղին ներկայանում
են նրան։ Մորա Մելիքը անհամար զորքերով գալիս,
պաշարում ե Սասունը։ Նա վճռել և մահ ու արհա-
վիրք սփռել ամեն կողմ։

«Քար քարի վրա չպիտի մնա,
Սասունը պիտի անապատ դառնա».

— Ասում ե Մորա Մելիքը։

Վախկոս Զենով Հոնանը նորից բոնում ե ժողո-
վրդի շահերի գալաճանության ուղին։ Նա պատրաստ
ե ընկնելու Մորա Մելիքի վորքերը, տալ պահանջած
հարկը, տալ Սասունի վոսկին ու ընակի աղջիկներին,

չահել հարսներին։ Բայց Դավիթը, նոր հետ և ժողովուրդը՝ յերկրի խակական տերերը, հակառակ զենով Հոնանի, թանգ են գնահատում հայրենի հողն ու ժողովրդին։

Այստեղ ե, վոր այնպես խորն ու ծավալուն կերպով դրսեվորվում են եպոսի յերկու գլխավոր հերոսների՝ Սասունցի Դավիթի և Մորա Մելիքի միանդամայն հակադիր բնալորությունները։ Մորա Մելիքը ժողովուրդներ ստրկացնող բոնակալի ախան ե, նա շտարներին ստրկացնելուց առաջ ստրկացրել երի սեփական ժողովրդին։ Իբրև բոնակալ, Մելիքը նենդ և ու խորամանկ ։ Ողովելով Դավիթի պարզամտությունից, բոնակալը նրան խաբեյությամբ հորն է զլորում։ Մելիքը միաժամանակ վախիոտ ե։ Զնայած իր հսկայական ուժին, նա, այնուամենայնիվ, համարձակություն չունի Դավիթի հետ մրցելու, իսկ յերբ արդեն անխուսափելի յե գառնում նրանց մենամարար, ամեն կերպ աշխատում ե, վոր այն ընթանա իր համար ձեռնառու պայմաններում։

Հակառակ Մորա Մելիքի, Դավիթն իր և բոլոր ժողովուրդների աղնիվ է անկեղծ բարեկամն ե։ Նրա յերջանկությունը իր ժողովրդի աղատ ու յերջանիկ կյանքի մեջ է։ Իբրև ժողովրդի հարազատ զավակ, Դավիթը քարոզում է ժողովուրդների խաղաղ համակեցություն։ Նա չի զնում նվաճելու Մոռորը, չնայած վոր հաղթել ե Մորա Մելիքին։ Մորա ժողովուրդին դիմելով, Դավիթն իր բարի ցանկություններն ե հայտնում ու խորհուրդ տալիս նրանց հաշտ ու խաղաղ կառավարելու։ Փոխադարձ աղնիվ բարեկամությունն ապահով նախապայմանն են Սասունի ու Մը-

սուրի ծաղկուն ու բարեկեցիկ կյանքի, ու բարողում և Դավիթը։

«Թող այսուհետև Սասուն ու Մասր Մոռանան անցած որերը տիսուր, Թող ծեն, ծաղկեն, նրանք միշտ դալար Սասունն իր համար, Մասրն իր համար։»

Դավիթի մարդկային նկարագրի աչքի ընկնող կողմերն են քաջությունը, շիտակությունը, աղնվությունն ու անհիշաչարությունը։ Դավիթը հողը և ինչպես ժողովուրդը և նրա պես մեծ և ու մեծահոգի։

«Սասմա ծոեր» եպոսի մեջ արտահայտված ե մեր ժողովրդի գարավոր պայքարն իր աղատ կյանքի, իր անկախ զոյության համար։ Եպոսի գլխավոր հերոսի, Դավիթի մեջ միս ու արյուն են ստացել այն ամենը, ինչ վոր լավ ե ու մարդկային, ինչ վոր աղնիվ է ու գեղեցիկ։ Դավիթը հայ ժողովրդի տիպական և նրա բարոյական կյանքի սինթելոդհանրացումն ե, նրա բարոյական կյանքի սինթելոդհանրությունն ե։

Եպոսի Դավիթը կեվոն Մանվելյանի մշակման մեջ, ինչպես տեսանք, վոչ միայն չի կորցրել իր լավագույն հատկությունները, այլև հարստացել ե նոր գծերով։ Առասպելական Դավիթը գարձել ե իրական մարդ, ազգային հերոս։ Նա աղատագրական պայքարի յե հանում իր ժողովրդին ընդդեմ ոտար նվաճողների։ Դավիթը պատրիոտիզմի մարմնացումն ե։

Կեվոն Մանվելյանի առանձնահատկությունների ամենակարեվորը ժողովրդի առկայությունն ե պիեռում։ Սասունցի Դավիթի կողքին կանգնում ե իր առ-

զատության համար մարտնչող ժողովուրդը։ Այս
հանգամանքը պիեսը դարձնում է իրական մի դըր-
վածք։

Լելոն Մանվելյանի «Սասունցի Դավիթ» և Մարա
Մելիք» դրամատիքական պոեմը մեր պատանի ընթեր-
ցողների զրադարանը հարստացնում է մի նոր արժե-
քափոր դրվաճքով։ Պոեմը դրված է պարզ ու սահուն
բանաստեղծությամբ, իսկ դրամատիքական ձևը ա-
վելի կենդանի յէ դարձնում այն։


Խորհրդային հայրենասեր պատանիները հարա-
զատությամբ կընդունեն այս դորձը։ Նրանք Դավիթի
մեջ և նրա պայքարում ընդդեմ Մորա Մելիքի կը-
զանեն իրենց հողուն մոտիկ ու հարազատ շատ գծեր։

«Ծնվել ենք ազատ, և լինենք ազատ»— ասում է
Հոկա Դավիթը։ Յերբեք և վոչ վոքի համար այնպի-
սի ճշմարտացիությամբ չեյին կարող հնչել Դավիթի
այդ խոսքերը, ինչպես այսոր մեր խորհրդային պա-
սանիների համար։

Խորհրդային յերիտասարդությունը Դավիթի անձ.
նվիրությամբ սիրում է իրեն հայրենիքը, Դավիթի
անկեղծությամբ նվիրված և նա իր ժողովրդին ու
նրա շահերին։ Խորհրդային յերիտասարդությունն
ժամանակած է Դավիթի աղնիլ խիզախությամբ։

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ
ՅԵՎ
ՄՄՐԱ ՄԵԼԻՔ

ՀՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՊՈՅԵՄԱՅԻ ԱՆՁԻՆՔ

ԴԱՎԻԹ · — ՄՀԿՐԻ ՎՈՐԴԻՆ ·
 ԶԵՆՈՎ ՀՈՆԱՆ · — Դավթի Հորեղբայրը ·
 ՍԱՌԻԱ · — Հոնանի կինը ·
 ԳՅՈՒՂՆԱԶ · — պառավ ·
 ՄԽՐԱՄԵԼԻՔ · — Մորա տերը ·
 ԻՍՄԻԼ ԽԱՆՈՒՄ · — նրա կինը, Դավթի մայրը ·
 ԼԵՅԼԱ · — Մորամելիքի աղջիկը ·
 ԿՈՍԹԱԴԻՆ · — Մորամելիքի սիրելին ·
 ԶԱՐԽԱԴԻՆ · — Մորամելիքի մերձավորը ·
 ՍՈՒԴԻՆ և ԲԱԴԻՆ · — Մորամելիքի հարկահաններ ·
 ԾԵՐՈՒՆԻ · — Մորա բանակից ·
 ՎՈՐՍԿԱՆՆԵՐ ·
 ԴԱՎԹԻ ԶԻՆԱԿԻՑՆԵՐ ·
 ՊԱՀԱՊԱՆՆԵՐ ·
 ԺՈՂՈՎՈՐԴ՝ տղամարդիկ, կանայք, աղջկերք, մա-
 նուկներ ·
 ԾԱՌԻԱ · — ԶԵՆՈՎ Հոնանի տանը ·
 ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐ ·



Կորեկի արտ, վարի ճախ կողմում յերեսում և մի փոքրիկ կիսավեր խրնիք: Արտի շարունակությունը կազմում և մի դաշտավայր: Հորիզոնում լեռներ: Արտի մեջտեղում մի ձողի վրա կանգնեցրած: և խրտվիլակ՝ բռչուներին վախեցնելու համար:

Պատակ Գյունազը պազած և կորեկի մոտ և բաղկամ և անում վարուները: Նա մարմնով խիստ վտիս և, խիստ գութառ: Քիրը և կզակը սուր և առաջ քեցված: դեմքի վրա անքիլ կիմիների ծալքեր: մազերը սպիտակ և զգգղված: Լար և լայն գտառ մեջ խրած և քեշէկը և մի գումար բուրդ:

Խրմիքի առաջ, դռան մոտ, միակ ծառը մի հիմ ուրի յե, խիստ ծուռ ու մուռ անած: Նրա տակ շվաքում ընկած և մի հատ կտնի, կեղեվը բոլորովին մաշված:

Գարնանային մի պայծառ առավուտ ե: Այս ու այն կողմից յավում են լորեկի հասուրկուր հեջյուներ: ավելի հեռվից՝ հոյլ-վական սրնգի ճայն:

ԳՅՈՒՆՆԱԶ. — Յերնեկ իմանամ, ես վիուճ խոտերը
Ինչի՞ համար ե ստեղծել տերը.
Քանզում ես՝ քանդում, ելի ճար չկա.
Խեղդեցին արտը, աստված ե վրկա:
Չորանան, վրտեն ձեր արմատները.
Լավ բան լինելիք, չեցիք բաղմանա:

(Խրմիքի կիսարաց դուրս են քափվում հավերը և մտնում են արտի մեջ: Գյունազը չարացած վեր և կենում և իր կորագուխ գափազանով սկսում ե նրանց քշիլ ներս):

Հիմի ել սրանք... իրար յետևից...
Սստված, աղատի՛ր ինձ սըրանց ձեռից:
Սըրանց ձեռի՞ն ել յես գերի մընամ:
Դե՛, նե՛րս գընացեք, թե չե, ա՛յ, կտամ...

Կորեկ... քի՛շ-քի՛շ-քի՛շ... չո՛ւ-չո՛ւ-չո՛ւ...
Հա՛յդե...

(Հավիերին ներս անելուց հետո՝ դուրք փակում ե, գատիկից հանում և քեշիկն ու բուրդը և նստելով կոնդի վրա՝ սկսում ե մանել: Քըի տակ մըրմառում և մի անխոս յեղանակ՝ մելամաղանու, միակերպ և նման ճախարակի ձայնին: Այդ ժամանակ Դաւիթը վագեկազ մտնում ե կորեկի մեջ և կոխկրտելով արտը՝ կամենում ե անցնել մյուս կողմի):

Ա՛յ տղա, արտը հե՞ր ես կոխկըրտում,
Գետի՞նը մըտած, դու չե՞ս ամաչում...
Գըրո՛ղը տանի, մահըս տանի քեզ,
Վոր իմ ապրուստըս ինձնից չը կըտրես...
Խըզմըտանք չունի՞ս, վոչ ու փուճ ելած...
ԴԱՎԻԹ. — Նանի, ինչի՞ յես այդպես չարացած:
ԿՅՈՒԼՆԱԶ. — Այ նանին հանի՛ քո ջուխտ աչքերը...
ԴԱՎԻԹ. — Նանի՛ ջան, վա՛յ ինձ, ա՞յդ և քո սերը,
Այդպես կանիծե՞ն ինձ նման վորքին:
ԳՅՈՒՆՆԱԶ. — Բա՞ս ինչ գործ ունիս իմ կորկի միջին:
ԶԵ՞ս տեսնում վոր յես
Պահում եմ արուըս աչքիս լըսի պիս:
ԶԵ՞ս վոր սա յե իմ սաղ տարվա հացը,
Սա յե իմ բոլոր յեղած չեղածը...
Բացվում ե թե չե աղոթարանը,
Մինչե իրիկուն արեկ տակին,
Պահապան շան պես՝ կանգնած դըռանը
իմ արտիս հատ եմ, նայում իմ կորկին:
Մի բոպե վըրից աչքս չեմ թեքում.
Մի բոպե մոտից ես չեմ հեռանում:
Կըտրել եմ քունըս,
Մոռացել տունըս,

Ծըսերին փախցնում, հավերին քչում . . .
Հիմի ել միայն դու եյիր պակաս
Վոր իմ կորեկը վասիդ տակը տաս . . .
Մէս, Մէսէր, Մըսէր, ուսհողի՛ Մըսէր,
Մի՞թե քո վորդին սա պիտի լիներ :
ԴԱՎԻԹ . — Նանի՛, հո Դավթից, քեզ ել ե հայտնի,
Մարդկանց չար մըսքով վլնաս չի հասնի .
Թէ անում ել եմ մեկին վասություն,
Դա ի՞նչ ե—միայն մի անփորձություն,
Կամ ջահելություն, վոր չուտով կանցնի :
ԱՌԵ յեթե կուզես, յես ասեմ, նանի՛,
Ինչպես պատահեց, վոր արտը մըտա :
Արտի յետեվում
Լոր եյի վորսում,
Հանկարծ դաւան չափ նապաստակ տեսա ;
Զարնել ուզեցի, դեպի դես փախավ,
Յես ել՝ քամակից : Նա արտը մըտավ,
Ու յես ել հետը . . . ու հետո, յերբ յես . . .
ՔՅՈՒՆԱԳ . — Ե՛ւ, Դավի՛թ, Դավի՛թ, ի՞նչ ասեմ յես
Քեզ :
Խելքով իսկ և իսկ յերեխա ես դու :
Ի՞նչ կվայել մի տըղամարդու
Արտերըն ընկած՝ լոր ու ծիտ զարնել,
Նապաստակների քամակից վագել . . .
Վոչ թե լոր ու ծիտ դու պիտի վորսաս,
Այլ խոշոր յեղնիկ, այծյամ ու վարազ :
Վորո անել կուզես, դընա են սարեր,
Ուր վողորմածիկ հերըդ. վորս կաներ :

ԴԱՎԻԹԻԹ .— Այնտեղ, ասում ես, լավ յերեներ կան :
ԳՅՈՒԼՆԱԶ .— Ամեն տեսակի, ընտիր պատվական :
ԴԱՎԻԹԻԹ .— (Խիստ ուրախ) Ուզի՞ղ ես ասում... թե
աստված սիրես .
ԳՅՈՒԼՆԱԶ .— Ի՞նչ հաշիվ ունիմ, վոր սուտ խոսեմ
յես :
ԴԱՎԻԹԻԹ .— (Լուրջ, մտախն) Ա՛յս իմ հորեղբայր,
ա՛յս, Զենով Հոնան,
Յես քեզ ինչ ասեմ... գըրաստի նըման,
ինձ կույր ես պահել,
Բան չես սովորեցրել:
Վա՛յ են խեղճ վորբին, վոր մընաց անտեր,
Թըշնամիս ել հետ չթողնի վորբեր :
Աստված վե՞ր կառնի : Մըհեր ունենա
Սեղան-սարի մոտ հարուստ վորսանեղ,
Ու նըրա վորդին դառնարած դառնա
Կամ ձեռըն առած մի նետ ու աղեղ
Պառավի արտում լոր ու ծի՞տ վորսա :
ԳՅՈՒԼՆԱԶ .— Թե զու խելք ունիս, Մըհերի ալղա,
Քո հոր յերկըին լավ տերություն արա,
Զենով-Հոնանից մեզ ոգուտ չկա :
ԴԱՎԻԹԻԹ .— Ուզի՞ղ ես ասում, նանի՛ ջան, ուզի՞ղ .
Դավիթը մենակ մարմնով և մի փիղ,
Բայց կարճ ե խելքը, յերեխա յե դեռ,
Ավասո՛ս անողուտ անցած տարիներ...
Ե՛ւ, վընաս չունի .
Վերջըն ե բարի :
Դավիթըն այսպես անխելք չի մընա .
Կը բացվի միտքը, շատ բան կիմանա :
Հենց այս որվանից յես վերջ եմ տալիս

իմ կուճ մանկության, իմ ջահելության.
 Յերկինքը վըկա, յես տեր եմ խոսքիս—
 Յես պետք ե լինեմ Մըհերի նման:
 ԳՅՈՒԼՆԱԶ.— Քո հոր արժանի զավակ ըլլինես,
 Յեթե դու նըրա ճամբիցը չեղվես:
 ԴԱՎԻԹ.— Հարամ լինի իմ կերած-խմածը,
 Թե չկատարեմ իմ խոստացածը:
 ԱՌ, լըսի՛ր, նանի՛: Հենց այսոր և յեթ
 Յես պիտի խոսեմ հորեղբորըս հետ:
 Պիտ ասեմ իրեն, ո՞վ եր Մըհերը.
 Գառնարած եր նա, թե Սասմա տերը:
 Ու նա ել կասի. «Սասմա թագավոր».
 Ու յես ել կասեմ, յեթե թագավոր,
 Հապա ի՞նչպես ե, վոր նըրա վորդուն
 Թողիր, վոր մնա անտեր ու անտուն.
 Բավական չե, վոր հերություն չարիր,
 Դեռ դառնարած ել նըրան կարգեցիր:
 Տեսնեմ թե նա ինչ կըտա պատասխան:
 Ու յես ել կասեմ Ե՛յ Զենով Հոնան,
 Հերիք ե, ինչքան Մըհերի վորբին
 Պահեցիր մըթան, խավարի միջին...
 Իմ աչքը բացվեց, լուսացավ աշխարհ:
 Մի ուրիշ հովիվ գըտեք ձեզ համար.
 Զեր դառնուկներին յես ձեզ եմ թողնում.
 Յես վորսկան եմ և իմ հորը յերկրում,
 Սեղան—սարի մոտ,
 Ուր արածում են յեղնիկ ու այծյամ,
 Վաղըն առավոտ
 Գընում եմ քեզ հետ յերեներ վորսամ:
 ԳՅՈՒԼՆԱԶ.— Մըհերի վորդու արժանի խոսքեր:

իմ որհնությունը լինի քեզ ընկեր:
 Հիմի խոսք չունիմ: Գընա՛, տերն ընդ քեզ:
 ԴԱՎԻԹ.— Գընում եմ, գընում, նանի՛ չան. բայց
 տես,

ԵԼ ինձ չանիծես: (Գնում Ե):

ՊԱՍՏԵՐ 2-ՐԴ

ՎՈՐՍԻ-ՍԱՐԸ: Տեսարանը ներկայացնում է քարձավանդակի տեղ, ուր յերեկում են նախկին անտարի հետքերը, կոնկր և մացառում: Մի քարձուրյան վրա յերեկում են ավերակներ: Արեվը մայր ե մտել, և կամաց-կամաց մուրն ընկնում ե: Գալիս ե Զենով-Հոնանը վորտրական շրով. նրա հետ յերկու վորսկաններ. վորոնցից մեկի մատի վրա քառած ե քաֆ: Քիչ հետո զալիս ե յերբորդ վորսկանը. նրա հետ յերկու քարակներ: Զենով-Հոնանը նատում ե մի կոնկի վրա՝ հանգստանարար. հոգնածուրյունից սաստիկ հելում ե: Մյուսները պառկում կամ հոգնածուրյունից այս ու այն կողմ: Ամենքը դադրած են յերերիք են ընկնում այս ու այն կողմ: Ամենքը դադրած են յերեւում:

ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— Սաստիկ դադրած եմ... ՈՌ, տե՛ր իմ աստված...

ԲՈՂՈՐ մարմինը այնպես ե ջարդված...
 Լ-ԻՆ ՎՈՐՍԿԱՆ.— Այս ամբողջ որը մենք ման ենք
 գալիս,

Սար ու քար, ձորեր վոտի տակ տալիս:
 ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— Լավ ե, յես չէիվանդանամ
 Ու այստեղ մընամ:
 Ե՛հ, զուր լըսեցի յես Դավթի խոսքին.
 Ի՞նչ կը վայելեր ինձ նման ծերին
 Բարձրանալ սարեր, յերեներ վորսալ...
 Վերջին անդամն ե. ել այստեղ չեմ գալ:
 2-ՐԴ ՎՈՐՍԿԱՆ.— Ավառ՛ս, զուր անցան մեր բռլոր
 ջանքեր.

Այստեղ բընավին չկան յերեներ :
 3-րդ ՎՈՐՍԿԱՆ .— Ել ասե՞լ ե պետք : Ամէն տեղ յե-
 ղանք :
 Քարափ չըմնաց , վոր չբարձրացանք ,
 Խոռոչ չըմնաց , վոր չըմտնելինք .
 Հովիտ չըմնաց , վոր չընայելինք .
 Վոտի տակ արվինք ամբողջ վորսասար ,
 Բայց յերեների հետքըն ել չկար :
 1-ին ՎՈՐՍԿԱՆ .— Զարմանալի յե : Կարծես այս սարին
 Աստվածային մի ցասում ե դիպել ,
 Կամ զարհուրելի կորակ ե անցել
 Յեվ այրել բոլոր ընչավորներին :

ԶԵՆՈՎ-ՀՈՆՍՆ .— Մութըն ընկնում ե , Դավիթը չկա :
 Տեսնես մեր խենթը վո՞րտեղ ե հիմա :

3-րդ ՎՈՐՍԿԱՆ .— Նըրահետ եյի մի թեքժայոփ տակ .
 Հանկարծ ինձ թողեց և արագ-արագ
 Բարձրացավ . կարծեմ , ինչ վոր բան տեսալ .
 Ու այսուհետեւ աչքիցըս կորավ :

ԶԵՆՈՎ-ՀՈՆՍՆ .— Հանկարծ գլուխը փորձանք չըերի :
 2-րդ ՎՈՐՍԿԱՆ .— Դավիթը քաջ ե . ումնի՞ց ահ քաշի :
 Թող թեկուզ առյուծ պատահի նըրան ,
 Կը խեղացընի , ինչպես մի դառան :

ԶԵՆՈՎ-ՀՈՆՍՆ .— Հա՛ , ասենք յերկյուղ չկա գաղանից :
 Յես վախենում եմ ուրիշ փորձանքից :
 Սարոտ յերկիր ե , դարուփոս տեղել .
 Ամեն մի քայլում գահավեժ ժայռել . . .
 Հերիք ե փոքրիկ անդուշություն ,
 Յեվ մարդ կորած ե , չկա փըրկություն :
 Անդունդի համար իրտրություն չկա .
 Ել չի հարցընում թըզուկ ու հըսկա :

3-րդ ՎՈՐՍԿԱՆ .— Նա կարող է և ճամբան կորցընել :
 ԶԵՆՈՎ-ՀՈՆՍՆ .— Հասա ինչ-այդ ել կարող ելինել :
 3-րդ ՎՈՐՍԿԱՆ .— Կուզեք յես դընամ ու նըրան
 փընտռեմ :

ԶԵՆ .— ՀՈՆՍՆ .— Վո՞չ , թողեք առաջ յես նըրան կանչեմ .
 Յեթե իր ճամբան կորցըրած լինի ,
 իմ ձենիս վըրա ճամբան կը դըտնի :
 (Զենով-Հոնսնը կանգնած ձայն ե տալիս : Նրա վիրխա-
 րի ձայնին դդրդալով արձագանք են տալիս շրջակա ձորերը) :
 Դավիթ , ե՛յ , Դավիթ , վորտեղ ես , վորդիս :
 ԴԱՎԻԹԻ ԶԱՅՆԻ .— Ե՛յ-հե՛յ , այստեղ եմ , գալիս
 եմ , գալիս :

1-ին ՎՈՐՍԿԱՆ .— Ահա յերեվաց :

ԶԵՆՈՎ-ՀՈՆՍՆ .— Փա՛ռք քեզ , տե՛ր աստված :

(Գալիս ե Գալիքը շալակած մի սպանված յեղթիկ , վոր նա
 գորում ե նրանց առաջ : Բոլորեցյան հալավվում են սպանված
 յերեյի շուրջը . նոյնական և շները հետաքրքրված հոտոսում են
 այս ու այն կողմից) :

ԴԱՎԻԹ .— Տեսե՞ք ինչ սիրուն յեղնիկ եմ զարկել :
 Խղճուկ . . . ուղղակի սրտին ե դիպել :
 Դեռ թըփըրտում եր սա ճանապարհին .
 Հենց այստեղ եր , վոր փըչեց իր հողին :

ԶԵՆՈՎ . ՀՈՆՍՆ .— Շատ խոշորըն ե և ինչքան
 գիրուկ :

ԴԱՎԻԹ .— Բա՛ , տեսե՞ք . . . Մինչև անգամ արտասուք . . .

Անմեղ կենդանի . . .
 Մի ասող լինի .
 «Ի՞նչ վընաս ելիր դու տըվել Դավիթին ,
 Վոր քեզ նետահար դըլորեց գետին» :

Տեսե՞ք , ինչպես ե իր վիզը ծըսել ,
 Բիբերը մարել , վերե են թըռել . . .

Բայց պետք ե ասեմ, ինձ լավ չարչարեց:
Խըղճուկի որը խիստ վաս տեղ մըթնեց.
Կամ ժայռի գըլիսից պիտի վար նետվեր
Կամ ել իր կյանքըն ինձ մատաղ աներ:
ԶԵՆՈՎ, ՀՈՆԱՆ.— Վաղուց ե վորսի միս կերած
չեյինք:

Ուրեմն եղուց մենք լավ ճաշ ունենք:
Խորոված կանենք ու նըռան գինին
Անուշ անելով կորհնենք Մըհերին:

(Վորսկանները քաշվել են մի կողմ և պառկոսել. նույնական շները: Զենով-Հոնանը ամբարին (վերնազգեստ) փակով էր տակը, քեզ ե ընկնում գիտնի վրա: Դավիթը մի պահ լուսաբանութիւն հետո, սկսում է խոսել):

ԴԱՎԻԹ.— Բայց մի բան ասեմ, հորեղբայր Հոնան.

Միթե սա յե ձեր հարուստ, դովական
Ու յերեվելի այն Վորսասարը
Ու դրախտի պես կանաչ անտառը:
Առաջ ել այստեղ դատարկ եր, տիսուր,
Այսպես անապատ ու չորս կողմը լուս:
Ինչո՞ւ այս խեղճը մենակ եր շրջում
Անընկեր, արքառում... Միթե՞ այս սարում

Այս յեղնիկըն եր միայն մընացել.
Իսկ ընկերները— ո՞ւր են գընացել:
Ինուրմ ես ձորը— վոչ մի շընչալոր,
Բարձրանում ես սար— չկա վոչ մի ձայն.
Յես չեմ հավատում, թե սա յե իմ հոր
Այն Վորսասարը՝ ընդարձակ ու լայն,
Ուր յերեներին թիվ—համար չկար:
ԶԵՆՈՎ, ՀՈՆԱՆ.— Դավիթ, սիրելի՛ս, այդ ամենը
կար:
Այծյամ ու յեղնիկ, յեղջերու, պախրա

Խըռնված խմբերով թափառում եյին
Գորդի պես փըռված մարդերի վըրա
Ռւ սարալանջի ժայռերի գըլիսին...
Այստեղ կար հընուց և մի յեղեգնուտ,
Ուր լիք եյին միշտ ահռելի կինձեր,
Վոր լուսաբացից մինչ իրիկնամուտ
Սըրում և հղկում եյին ժանիքներ՝
Հասուն յեղեգներ փըրցնելով ողում,
Վորոնց աղմուկըն հասնում եր հեռուն:
ԴԱՎԻԹ.— Բայց ո՞ւր են նըռանք... ինչո՞ւ չեմ
տեսնում...

Հավեր ել չը կան այս անտեր յերկրում,
Վոչ լոր, վոչ կաքավ և վոչ վայրի բաղ—
Չըկա վոչ մի հատ:
Այստեղ ամեն ինչ այնպիս ե մեռած,
Վոր կարծես կյանք բընավ չե յեղած:
Բայց ո՞ւր և ձեր այն սիրուն անտառը,
Յեվ ո՞ւր են վիթխարի այն սոսիները:
Վորոնց դեղեցիկ, կանաչ կատարը
Բարձրանում եր վեր, մինչև աստղերը:
ԶԵՆՈՎԻՆ.— Դավիթ, հավատա՛, անապատի տեղ,
Մի հիանալի դըրախտ եր այստեղ,
Վորի նըմանը վոչ մի տեղ չըկար:
Համբավ ուներ, վոր լըցրել եր աշխարհ:
ԴԱՎԻԹ.— Բայց ի՞նչ պատահեց, ի՞նչ հրաշք յեղավ,
Վոր այդ բոլորն հանկարծ ըքքացավ.
Ի՞նչ զարհուրելի ույժ պիտի լիներ,
Վոր չեն դըրախտըն անապատ շիներ:
Ասա՛, հրեշի անունը տո՛ւր ինձ.
Այրվում ե սիրտը կըրակ ու բոցից:

ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— Անցած դընացած բաների վըրա,
Սիրելի վորդի, շատ մի՛ բարկանա:

ԴԱՎԻԹ.— Ա՛, կամենում ես ինձանից ծածկե՞լ...

ԶԵԼ', պիտի ասես, յես կուզեմ լըսել:

ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— Մորամելիք և դըրա անունը:

ԴԱՎԻԹ.— Մըսրամելի՛քը... Մըսրա այն չո՛ւնը...

ԶԵՆ.-ՀՈՆԱՆ.— Հենց վոր նա լըսեց ել չըկա Մըհեր,
Ժողովեց անթիվ անհամար զորքեր,
Մըտավ մեր անտեր մընացած աշխարհ՝
Մասում անելու գետնին հավասար:
Կըրակ եր ընկել, վառվում եր Սասում,
Բոցն ու ծուխը յերկինը եր հասնում...

ԴԱՎԻԹ.— Բայց զո՞ւ, հորեղբա՛յր, հո մեռած չէյի՞ր
Դու այդ ամենը տեսար քո աչքով—
Յեվ համբերեցիր, տարար, լլուցիր,
Վրեժիսնդրության բոցոտ կըրակով
Զը լըցվե՞ց հոգիդ...

ԶԵՆ.-ՀՈՆԱՆ.— Խոհեմությունը լավ բան ե, Դավիթ:
Ի՞նչ կարող ելինք մենք անել, ասա՛.
Թըշնամին մեզ շատ նեղն եր դըրել.
Մասմա սարերի, դաշտերի վըրա
Մի սարսափելի բանակ եր դըրել,
Զը կար վերջ անխիղճ կոտորածներին...
Կըրակ եր թափում խեղճ Սասմա գըլմին,
Այդ որով եր, վոր և Վորսասարը
Այսպես չորացավ,
Յեվ պարսպապատ կանաչ անտառը
Անապատ դարձավ:

ԴԱՎԻԹ.— Մըսրամելիքի բախտիցըն ե, վոր
Յես այդ ժամանակ փոքրիկ ելի դեռ,

Յես կը թողնեցի, վոր նա գար իս հոր
Ծաղկած յերկիրը քարուքանդ աներ . . .
ԶԵՆՈՎ-ՀՈՆՈՆ . . . Դապիթ, միամիտ մի՛ խոսիր
այդպես . . .

Նա սովորական մարդ չէ հասարակ,
Այլ մի աժդահա ահոելի և վես,
Ինչպես ամրոցի գոռող աշտարակ;
Յերբ գուրզ ե զըսում Մըսուր քաղաքից,
Սակավ ե մընում հասնի Զինմաշին.
Յերբ ման ե գալիս, կարծես թե հիմքից
Սարեր փուլ յեկան և կործանվեցին.
Տափը դողում ե վոտների տակին:
ԴԱՎԻԹ . . . Թող հիմա յել նա մեր յերկիրը դա . . .
Մըրամելիքից վախեցող չըկա :
Հորեղբայր Հոնան, քեզ մի բան ասեմ.
Իմ հոր յերկիրը ըս պիտի թողնեմ
Այս խեղճ դրության, այսպես անապատ,
Ծընվել ենք ազատ և լինենք ազատ:
Այստեղ նոր անտառ մենք պիտի դըցենք.
Անտառի չորս կողմ պարիսպներ քաշենք.
Նըրա մեջ նորից կյանք պիտի յեռա,
Յերկիրը նորից պիտի չենանա :
Թող առաջգա պես ուրախ խըմբերով՝
Անթիվ յերեներ այստեղ թափառեն,
Թընամիներից իսպառ ապահով
Մարդերի վըրա հանդիստ արածեն :
Թող աճեն, ծաղկեն ծառեր, ծաղկիներ
Յեկ ողը լըցնեն անուշ զովությամբ,
Յեկ հաղար ու մեկ գեղզեղուն հավքեր
Թընդացնեն անտառն յերգեցողությամբ . . .

Նախշուն ծաղկի պես...
Բայց քընորք չե սա և վուճ յերազ
Հե՛յ-վա՛խ, հորեղբա՛յր, պարտական մնաս,
Թե վոր ինձ չոգնես
Ու մենակ թողնես:

ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— Ավելի լավ ե, Դավիթ, վոր հիմա
Մենք ել սըրանց պես պառկենք ու քընենք.
Իսկ առավոտյան, յերբ վոր լուսանա,
Այդ մասին քեզ հետ յերկար կը խոսենք:
ԴԱՎԻԹ.— Քընի՛ր, հորեղբա՛յր, յես ել քո մոռին
Այսուղ կը պառկեմ, բայց ամենեվին
Քընել չեմ ուզում:

(ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆՆ արդեն քնած է. Առյօնիկ և մյուս վորսկանները: Դավիթը քեֆ և ըմկել հորեղբոր մոտ և անշարժ նայում ե մի կետի վրա՝ մոլիքրով հեռու-հեռու տարված: Նրա աշքերի առաջն ե Մարուբա սարի սովերագիծը, վորի գագարին յերեվում ե Աստվածածին ալիբրած վանքը: Այն կողմում Դավիթը նշարում ե մի ներմուկ և մաքուր լույս, վորը բղում ե մարմարինի պատուվածքից և կարնագույն շողեր և տարածում իր շուրջը: Լույսը գնալով ավելի և ավելի պայծառանաւում է: Դավիթը զարմացած և սրտահույզ վեր և կենում իր տեղից):

Արարի՛չ Աստված, այն ի՞նչ ե այսուղ...
Սա վոչ ճըլագ ե
Յեկ վոչ կըրակ ե,
Այլ աստղից պայծառ լույս հըրաշագեղ:

(Դավիթը զնում ե լույսի ուղղությամբ և միշտ հետո վերաբառում՝ սաստիկ այլայլված՝ խորհրդավոր յերեվույրի տպավորության ներքո):

Հորեղբա՛յլ հոնան... ի՞նչ խոր քընած ե...
Զարթեցնե՞մ թե վոչ... Քանի չե մարած,
Թող սա ել տեսնի... Հորեղբա՛յր, զարթի՛ր,

Այնտեղ մի լույս կա... այն կողմը նայիր: ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— (Զարթնելով) Դավիթ, արթո՞ւմ
ես, դու քընած չե՞ս դեռ:
ԴԱՎԻԹ.— Յես ել չեմ կարող քնել այս գիշեր:
Տե՛ս, այն ի՞նչ լույս ե Մարութա սարում
Այնպես անարատ և այնքան պայծառ...
Իր շուրջն այնպե՞ս ե լուսավորում,
Վոր պարզ յերեվում ե ամեն մի քար:
Տե՛ս-քանի մութը թանձըրանում ե,
Այնքան ավելի պայծառանում ե,
Սա ի՞նչ ե, ասա՛, հորեղբա՛յր հոնան,
Ի՞նչ խորհուրդ ունի, ի՞նչի՞ յե նըշան...

ԶԵՆ-ՀՈՆ.— (Վեր եկենում և խաչ հանում յերեսին)
ԴԱՎԻԹ.— Այսի՛ր, հորեղբա՛յր, ինչ դիտես պատմիր
ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.— Դե ինձ լավ լըսիր:

Այն բարձր տեղը, վոր այնպես պայծառ
Ճըլագեն լուսով լուսավորված ե,
Կանդնած եր առաջ մի սիրուն տաճար,
Վոր հիմա քանոված և ավերված ե,
Անզուգակա՞ն եր, հրաշալի՛ յեր նա,
Նըմանը չըկար մեր ամբողջ յերկրում,
Գըմբեթի խաչը, Դավիթ, համարյա
Մինչև կապուտակ յերկինք եր հասնում:
Յեկ գուռ ուներ նա—մի ըսքանչելիք.
Այնքա՞ն նուրբ, չըկեղ, այնքա՞ն դեղեցիկ...
Ամենահմուտ վարպետի ձեռքով
Վերելից ներքեւ ծածկված զարդերով...
Իսկ ներսը, ներսը... ի՞նչ պայծառություն...
Ուղիղ յերկնային մի արքայություն:
Թե՛ կամարներում և թե՛ պատերին

Քանի՞ հատ ասեմ պատկերներ կային,
 Այնքա՞ն գեղեցիկ և նուրբ նկարած,
 Կարծես իենդանի առաջիդ կանդնած...
 Բոլոր ոյուները— սըրբատաշ քարից,
 Միաձույլ, ասես՝ հալած ու թափած,
 Յեվ խարիսխներից ու խոյակներից
 Էզմայլվում եր մարդ և մընում ապչած,
 Թե ուր կարող ե հասնել մեր հոգին,
 Յերբ ձգտում ե նա վեհին ու բարձրին:
 Յեվ ի՞նչ հիացք եր զանգակատունը
 Ու վերև կախած նըրա գանգերը,
 Վորոնց քաղցրաձայն, զորեղ թընդյունը
 Լըցնում եր չորս կողմ բոլոր ձորերը...
 Տիրամոր տոնին, ամուսն վերջերում,
 Ամբողջ Սասումը այնտեղ եր լինում:
 Մարութա սարը կենդանանում եր,
 Զարդարվում, կարծես գալնան ծաղկունքով,
 Յեվ ծովի նըման ալեկոծում եր
 Ուրախ ամբոխը՝ իրար անցնելով...
 Չորս կողմը, բոլոր ճանապարհներում
 Ուխտավորներ ե վոր կը խըսնըվեյին՝
 Մի ծայրը կորած Սասմա կիրճերում
 Յեվ մյուս ծայրը՝ Մարութա գըլխին...
 Ա՛մ, անդանալի՛, յերջանի՛կ որեր...
 Անտեղ տըխրություն ասածըդ չկար.
 Յեվ ուրախ եյին թե՛ մանուկ, թե՛ ծեր
 Ժողովրդական այն տոնի համար:
 Այնտեղ ընդհանուր ուրախության մեջ
 Յուրաքանչյուր վոք թե կին և թե մարդ
 Թաղում եր բոլոր հոգսերըն անվերջ

Յեվ ինչքան սըրտում ուներ ցավ ու դարձէ,
 Ամենքըն ուրախ, ամենքըն զըվարթ:
 ԴԱՎԻԹ Ա՛մ, յերնե՛կ յես ել, Հորեղբայր Հոնան,
 տեսած լինելի գոնե մեկ անդամ:
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ Ի՞նչ խառն բազմություն, ի՞նչպիսի
 աղմուկ...

Այստեղ աշուղի սազըն ու տաղը,
 Այստեղ զափ-զունան կամ թե մեղմ դուղուկ,
 Յեվ ջահել խըմբի պարըն ու խաղը:
 Մի տեղ, կը տեսնես, վասնդի դիմաց՝
 Անթիվ թըլիսմներ ուսերից կախած՝
 Լարախոսղացը ճարպիկ վոստյունով
 Անցնում ե արագ ձգված պարանով,
 Նստում, վեր ցատկում, ինչպես սատանա,
 Յեվ համկարծ, կարծես թոկից ընկնելով,
 Դըլիսիվայր կախվում մի վոտքի վըրա:
 Իսկ խենթը ներքե՛ նըրա ծաղրածուն
 Հետեւում ե իր հըմուտ վարպետին
 Յեվ հարթ-հավասար ու փափուկ գետնին
 Նըրա պես ցատկում, վազում, գլորվում
 Յեվ հիանում իր հնարքի վըրան
 Ի մեծ ցնծություն խմբված բազմության:
 Մի կողմ՝ ըսկեսուր և հարս ու աղջիկ
 Մատաղի համար կըակ են անում,
 Մյուս կողմ՝ նստոտած են ծալապատիկ
 Ու յեփած տաք-տաք մատաղըն ուտում,
 Իսկ վանքի առաջ ի՞նչ գոռում-դոչում...
 Ճամբան կը դառնար մի վաճառանց.
 Մըրգավաճառը՝ առաջը դրած
 Պտուղներով լի քանի մի կըթաց՝

Գովում եր ձենով իր հետը բերած
Անուշ խաղովը, կարմիր խնձորը,
Շաքարի տանձը, մալաս-սալորը
Մեղրահամ սեխը և այն բոլորը,
Ինչով վոր տերը մեր յերկնային
Լցրել ե առատ դեղջուկի այգին:

ԴԱՎԻԹ. — Բայց ի՞նչ պատահեց:

Յերկի՞րը շարժվեց,
Թէ գարձրալ Մըսրա մոլի դաղանը...

ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Այս, նա քանդեց այս մենաստանը.

Յեկ, մեր հոյակապ տաճարի տեղակ,
Թողեց մեզ համար մի խեղճ ավերակ:
Բայց սըրբությունը սրբություն մնաց.
Ու նըսրա մարմար սեղանի վըրան
Պայծառ, հրեղեն մի լույս յերեաց...

ԴԱՎԻԹ. — Հորեղբայր Հռնան, տե՛ս, եւ «Հ» չը կա.

Մարութա վանքը, աստված ե վրկա,
Մենք շուտով պիտի վերանորոգենք:
Իսկ Վորսի-սարը առ այժմ թողնենք:

Յերդվում եմ, իմ հայր, քո վերեղմանավ,
Տաճարը վոտի կը կանդնի շուտով:
Պիտի մոռանամ, թողնեմ այսուհետ
Վորսորդվությունը իմ աղեղ և նետ,
Բոլոր յեռանդով և ամբողջովին

Նվիրվեմ պիտի յես իմ սուրբ կործին:
Իսկ դու, հորեղբայր, ինձ պետք ե ողնես:
Հենց վոր կը ծաղի վաղվան արեղակ,
Մարութա վլիսին պիտի ժողովես
Հարյուր հատ վարպետ, հաղար հատ մշակ,
Վոր սուրբ տաճարի նոր հիմքը դնեն:

Աշխատանքներին կը հսկեմ անձամբ
Յեկ միայն այն որ սարիցը կիջնեմ,
Յերբ վանքը նախկին իր գեղեցկությամբ
Մարութա վլիսին կանգնած կը տեսնեմ:
Մենք չենք խնայի վո՛չ փող և վո՛չ ջանք,
Մարութա վլիսին այն կրարձրանա
Այնքան փառավոր և այնքան պայծառ,
Վոր իր համբավը տարածվի աշխարհ:
Արեվը վըկա, թէ հընար լիներ,
Չուլել կտայի այնպիսի զանդեր,
Վոր, յերբ վերհատեն, նըանց զիլ ձայնից
Զարթներ թշնամին իր քաղցր քնից:
ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Դավիթ, ձեռ վեր առ դու այդ քո
մտքից:

Յոթը տարի յե, վոր Մըսրա տերը
Մոռացել եր մեզ խարջ չեր պահանջում.
Յոթը տարի յե, հարկահանները
Սասմա աշխարհում չեյին յերեսում.

Ասկարը կառնի մեզ վրա կը գա
Իսկ յեթե հիմա վերանորոգենք
Ավերված վանքը, առաջվա նման,
Նըսրա սըրբութը կըրակ կը վառենք
Մի զարհուրելի վրեժխնդրություն:

Յեկ ամբողջ Սասում վոտի տակ կը տա:
ԴԱՎԻԹ. — Թո՞ղ գա. նըանից ես չեմ վախենում.

Յեկ խոսքիս վըրա հաստատ եմ մնում:
ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Մեր մեծ աղետի պատճառ կը դառնաս
Ու հետո, Դավիթ, սաստիկ՝ կը զդջաս:

ԴԱՎԻԹ. — Ինչ վոր եւ ասես, վաղ առավոտյան
Պիտի ձեռք զարկենք վանքի շինության:

Դու ել, հորեղբա՛յր, յԵղիր ողնական,
Յեղիր ողնական նորելուկ Դավթին:

ՊԱՏԿԵՐ Յ.ԹԻ

Մարամելիքի ապարանք: Մի դասին, վորի պատերը և գմբերան առաստաղը գույնզգույն ապակիներից են, վորոնյ շնորհիվ սենյակն ստանում ե մի տեսակ կախարդական բնափորություն: Հատակը մարմարյա: Դահլիճն նակատին դրված է գանը: Պատի վրա կախված են զենք ու զրահ՝ նետ-աղեղ, կապարն, գուրզ, նիզակ, վահան, սրեր: Կան նաև զարդարանքներ՝ յեղյուրներ, վագրի մորքի, անորներ մարդկային զանգից՝ արձաքապատ և բանդակագործ, վարազի ժամփներ: Քերի վրա կախված:

Մարամելիքը՝ շին, գույնզգույն զգեստով, գուտիով, կեռ սուրբ կապած և զիլին չալմա՝ աղամանդներով զարդարած՝ առողջ փառու քաղմել է զահի վրա և շփում է յերկայն ալենառըն մորութը և մինչև ականջները տարած թեխուրը: Ինչը խոժողադիմ է, քանզի աչքերը աև ու դաժան:

Մտնում ե մի թիկնապահ և դուն մոտ կանցնում:

ԹԻԿՆԱՊԱՀ. — Հզոր խալիքա, քո խոնարհ ծառան՝
Քաջ կոսրագինը սպասում ե դռան:

ՄՄՐԱՄԵԼԻՔ. — Թո՛ղ ներս զա չուտով:

Թիկնապահը գնում է: Մտնում է կոսրադիմը, մոտենում է զահին և չոփելով պատվանդանի վրա համբուրում է Մարամելիքի փեշը):

Կոսրագին, բարո՛վ:

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Արեգակնակայլ անհաղթ իմ արքա,

Մի տիսուր համբավ Սասմա աշխարհից:

ՄՄՐԱ-ՄԵԼԻՔ. — Լսում եմ, ասա՛:

Այդ յերեսում ե քո մռայլ դեմքից:

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Շըրջագայեցի, ըստ քո հրամանին,

Քո մեծ տերության բոլոր ծայրերը:

ՄՄՐԱՄ. — Յեկ ինչողութ գտար: Ամեն տեղ կարդի՞ն:

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Այս, թող վըստահ մինի իմ տերը:

Ամեն տեղ հանդիսաւ և խաղաղություն,

Յեկ ժողովուրդը հաղար բերանով

Փառաբանում ե քո որհնյալ անուն՝

Յերջանիկ, ուրախ և միշտ ատահով:

Բայց միայն մի տեղ, միմիայն Սասում

Յես նկատեցի ինչ վոր խըլլըտում...

ՄՄՐԱՄ. — Ի՞նչ տեսար այնտեղ, ի՞նչ գիտես, ասա՛:

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Դեռ մի առանձին մեծ վըստանդ չը կա.

Զը կա, բայց հետո կարող ե լինել:

Մըհերի վորդին զլուխ և բարձրացրել:

ՄՄՐԱՄ. — Այն ինելառ տղա՞ն, այն խոզարա՞ծը...

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Այս, տե՛ր արքա, այդ անիծվածը:

ՄՄՐԱՄ. — Ավառո՞ս, վոր այդ չար ոճի ձագուկին

Յես չըսպանեցի իր ժամանակին,

Յերբ վոր նա անխելք յերեխա յեր դեռ...

Հիմա նա վաղուց վըստած կը լիներ:

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Իր ժողովուրդի գլուխն անցած՝

Անում ե, ինչ վոր սիրալն ուզում ե,

Ժողովուրդըն ել, ուղիղըն ասած,

Նրան կուռքի տեղ յերկըրապագում ե,

Դավթի անունով յերդում ե ուտում

Յեկ Սասմա իշխան ու տեր համբարում:

ՄՄՐԱՄ. — Ուսո՞ր, մռացան Մարամելիքին...

Յես դրանց խելքի կը բերեմ կըրկին:

ԿՈՍԲԱԴԻՒՆ. — Հիշո՞ւմ ես, տե՛ր իմ, Մարութա վանքը:

Վոր համբարվում եր Սասմա պարծանքը,

Յեկ հպարտ կանդնած սարի կասարին
 Հասնում եր կապույտ յերկնակամարին:
 Յերբ վերջին անդամ ասպատակեցինք
 Սասման յերկիրը սըրով և չըրով
 Այն վանքըն ել մենք քարուքանդ արինք՝
 Գըմբեթը գետնին հավասարելով:
 ՄՄՐԱՄ.— Յեկ մնաց միայն մի խեղճ փլատակ:
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Բայց հիմա արդեն փլատակի տեղ
 Կանդնած ե մի նոր տաճար փառահեկ,
 Վորի զանգերի ուշդին ձայները
 Հասնում են մինչև Մսրա սարերը:
 ՄՄՐԱՄ.— Բայց ո՞վ հանդլդնեց, առանց իմ կամքի,
 Զեռ զարկել մի նոր տաճարի շենքի:
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Ել ո՞վ կաներ այդ-միայն Դավիթը,
 Սամա պաշտելի և քաջ իդիթը:
 ԵՄՐԱՄ.— Բայց նա չեր կարող, չեր համարձակվի...
 Մի՞թե չեր լըսել Մըսրամելիքի
 Վիթխարի ույժը, կարսղությունը,
 Մի՞թե չեր լսել նա իմ անունը...
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Յեթե գրլիսումը քիչ խելք ունենար,
 Նա այդ չար զործից հեռու կը մընար:
 ՄՄՐԱՄ.— Բայց ի՞նչպես ե, վոր մենք չենք իմացել:
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Կարձ միջոցում են տաճարը շինել:
 Վըրան բանել են յոթն որ շարունակ
 Հարյուր հատ վարպետ, հազար հատ մըշակ:
 ՄՄՐԱՄ.— Յեկ հիմա պատրաստ ե բոլորովին:
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Ինչպես չե, մինչև անդամ ոծեցին,
 Են ել ի՞նչ շըքով,
 Ի՞նչ մեծ հանդիսով...
 Յես հեռու կանդնած տեսա բոլորը.

Դըրանց ծեսերը, դըրանց թավորը,
 Ամէ ու խաչվառը...
 Խունկ ու բուրվառը...
 Լըսեցի դըրանց ժամերգությունը,
 Վանքի զանգերի ուրախ թընդյունը...
 ՄՄՐԱՄ.— Լըսէր, կոսբադին: Հենց վաղն և յեթ
 Ճանապարհ կընկնեք Զարխաղինի հետ
 Դուք դեպի Սասում:
 Շատ կարձ միջոցում
 Հարկատու յերկրից պիտի ժողովեք
 Յոթ տարվա խարջը-քառասուն բեռ վոսկի:
 Բայց չը լինի թե դուք ականջ դընեք
 Աղաչանքների կամ արտասուքի...
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Անհոգ կաց, իմ աեր, և վըստահ յեղիր.
 Բառասուն բեռ վոսկին պատրաստ համարիր:
 ՄՄՐԱՄ.— Յես ձեղնից կուզեմ և քառասուն աղջիկ
 Աղապ, գեղեցիկ.
 Քառասուն կարձ կընիք, վոր յերկանք աղան:
 Յեկ քառասուն յերկայն, վոր ուղտեր բարնան:
 Բայց ահա ձեզ իմ խիստ հըրամանը.
 Մինչեւ բոլորը պատրաստ չը լինի
 Սասումից յելնել, անցնել սահմանը
 Վոչ վոք ձեղանից իրավունք չունի:
 ԿՈՍԲԱԴԻՆ.— Հըզոր ալլահի ողնականությամբ
 Քո տըված բոլոր պատվիրանները
 Յես կը կատարեմ խստիկ, ճըշտությամբ,
 Յեկ գոհ կը մընա իմ բարի տերը:
 ՄՄՐԱՄ.— Իսկ գալով Դավիթին, ձեռ-վոտըն ամուր
 Կապկապած՝ ձեզ հետ կը բերեք Մըսուր:

ԿՈՍԹԱԴԻՆ.—Վաղ առավոտյան կելնենք անպատճառ։
ՄՌՄԱՐ.—Բարի՛ ճանապարհ։
ԿՈՍԹԱԴ.—Բարո՛վ մընաս, տե՛ր։ Թող մէծ ալլահը
Հաստատուն պահի քո վոսկի վահը։
(Կոստադինը գնում ե)։

ՊԱՏԿԵՐ Ա. ԹՊ.

Գյուլմազի բանջարանցը, ուր բուսել ե շաղզամ։ Ազ կողմում յերեվում ե խրնիքը՝ փակված դանով, զալիս են Մարտինիքի հարկահանները։ Բաղին և Սյուդին։ Սրանց առաջնորդում ե Զենով-Հոնամի կողմից մի պահապահ։ Բոլորն ել զինված են։ Պահապահը բաղխում ե խրնիքի դուռը։

ՊԱՀԱՊԱՆ.—Պառա՛վ, ե՛յ պառա՛վ, արի գուռը բաց։
ԳՅՈՒԼԻՆ.—(Գուան յետնից) Աստված տա, աստված։
Վո՛չ փող կա, վո՛չ հաց։
ՊԱՀԱՊԱՆ.—Հաց ուզող չըկա։
Դուռը բաց արա։

(Գյուլմազը կամենում ե բաց անել դուռը, բայց նկատելով զինված մարդիկի նշանով և վախեցած դուռն խկույն գոցում ե)։
ԲԱԴԻՆ.—Ի՞նչ կա վախեցար,

Այ հիմար քավթառ։
ՍՅՈՒԴԻՆ.—Բաց արա, թե չե կրընկահան կանեմ,
Քացի կըտամ ու դուռըդ կը կոտրեմ։
ԳՅՈՒԼԻՆԱԶ.—(Գուլխը հանելով) Սրանք ո՞վքեր են։
ՊԱՀԱՊԱՆ.—Մըրացիներ են։

Յոթ տարվա խարջը յեկել են տանեն։
ԳՅՈՒԼԾ.—Յես վոչինչ չունիմ...ի՞նչ պիտի առնեն...
ԲԱԴԻՆ.—Վոսկիքը հանիր բեր այստեղ շուտով։
Յեթե չես ուզում, վոր խըլենք զոսով։
ԳՅՈՒԼԾ.—Այ անսատվածներ, դուք ինչ եք ուզում
Ես կերած-կորած անտեր պառավից։

Ինչի՞ յեք յեկել գըռներս կոտրում։
Ինչ պահանջ ունիք, արեք հարըստից։
Ինձ պես աղքատին ո՞վ և փող արվել,
Վոր յեկել եք իմ գըռանըս կանգնել։
Տունըս դատարկ ե։ Մի պղինձ չըկա
Ազիզ որերը կերակուր յեփեմ,
Կա մենակ մի հին, ժանգոտած կաթսա,
Են ել փող չունիմ դոնե կըլեկեմ։
Մի խըսիր չունեմ, վոր փըռեմ տակըս,
Զմեռվա ցըրտին գետնին եմ պատկում,
Մի փալաս ե իմ վըրի վերմակըս—
Փաթաթիքում եմ ու կըծիկ եմ դատնում։
Ախը ի՞նչ ունեմ, ինչի՞ս եք կարոտ,
Վոր եղքան հոգով յեկել եք ինձ մոտ։
ՊԱՀԱՊԱՆ.—Դու սո՛ւտ ես, լըռի՛ր, զգվելի ջաղու։
Յես չե՞մ իմանում, թե ո՞վ եյիր դու։
Յերբ վոր Մըհերը կենդանի յեր դես,
Մեղանից ամեն մեկըն ել գիտեր,
Վոր դու սիրականն եյիր Մըհերի,
Վորին դարձըրել եյիր քեզ դերի։
Տունըդ շըքեղ եր պալատի նըման,
Զարդարվում եյիր անզին քարերով,
Ազրուստ ունեյիր թագավորական,
Մընդուկներդ լի վոսկով-արծաթով։
Հազածդ եր միշտ բեհեղ ու դիպուկ,
Կերած-խըմածըդ՝ մեղըր ու կարագ։
ԳՅՈՒԼԾԱԶ.—Բայց Մըհեր մեռավ, ու Մըրա տերը
Ներս թափեց Սասում բոլոր զորքերը.
Ինչ վոր ունեյի, հափշտակեցին,
Բեհեղ ու դիպուկ, վոսկի ու արծաթ,

ՏՅՈՒՆԸՄ քանդեցին և կըրակ տըլին,

ինձ եւ կարձըրին մի հետին աղքառ:

ՍՅՈՒԴԻՒՆ. — Դե բերում ես, բե՛ր, թե չե... չո զի-
տես...:

ԳՅՈՒԽԱՆԱԶ. — Անհավա՛տ, անգո՛ւթ իրդմըսանք
չունե՞ս:

ԲԱԴԻՆ. — ՅՆԿԵՔ ներս մըտնենք
Առ զուով առնենք:

(Բայդինը կամենում է մանել խրճիքը, Գյուլնազը՝ շեմքում
կանգնած՝ աշխատում է արգելել):

ԳՅՈՒԽԱՆ. — Հեռու եստեղից... չե՛մ թողնի մտնեք...

ԲԱԴԻՆ. — Կորի՛ր... Պատավի ձայնը կըտրեցե՞ք...

(Սյուռին խփում է Գյուլնազին, վորք վայր է ընկնում զիտին
և ուշարափ մնում է մի ժամի բազե: Սյուռին, Բադին և պա-
հապանը մտնում են խրճիքը և դուռը ծածկում: Գյուլնազը կա-
մաց-կամաց ուշքի յե գալիս և վեր կինում):

ԳՅՈՒԽԱՆԱԶ. — Յալլս ասնեք գուք, գո՛ղ ավաղակներ,
Անսատված, անխիղճ, անհավատ շըներ...

Զեր վոտը կոտրվեր ճամբին մընայիք,

Դո՞ւք եյիք պակաս ինձ կողոպտեյիք...

Աստված, գու արա սրանց գիվանը,

Մի վերջ տուր սըրանց գաղանությանը...

(Գուրս են գալիս խրճիքից Բադին, Սյուռին և պահապանը):

ԲԱԴԻՆ. — Վա՛, մենք կարձեցինք, վոր ես քայլթառը
Արդեն զընացել ե են աշխարհը...

Վո՛չ, կենդանի յե ու հաջում ե զեռ:

Վոսկին չո առանք, զե զընա ու կեր:

ԳՅՈՒԽԱՆԱԶ. — Վա՞յ ինձ... քոռանամ... դա իմ
բալիկես

Ականջի ողն և կընքահոր բերած...

Լույս զառավ, զընաց սիրուն աղավնիս,
Եղ հիշատակըն ինձ միայն մընաց:

Տո՛ւր ինձ, յետ տուր ինձ իմ աչքիս լույսը,
իմ ուրախությունն ու միակ հույսը...

Լավ է ինձ մորթես, կենդանի թաղես,
Բան թե գրանից հավիայան զըրկես:

Սըրբեցեք տունըս, բոլորը տարեք,

Միայն թե, ի սեր ձեր զավակներին,
Խընայեցեք ինձ, իմ ծեր հասակին...

Եղ ողը, մենակ եղ ողը թողեք...

Տե՛ս, վոտքը ընկած յետ աղաչում եմ,
Մի՛ տանիր, յետ տուր, վոտք պատում եմ...

ԲԱԴԻՆ. — (Հքելով) ՀԵ՛ր ես կոճղի ոկես ընկել վոտի
տակ...

ՍՅՈՒԴԻՒՆ. — Բան ասաց սա ել. «Վորդուս հիշատակ»:

(Ծիծաղելով զնում են: Գյուլնազը շարանում է վիուկի պես և
սկսում է անիծել նրանց յետից):

ԳՅՈՒԽԱՆ. — Վա՞յ ինձ, ինչ անեմ, հողըն իմ գըմին...

Գողացան, տարան, հավըտակեցին...

Ա՛յս, թող եղ ողը քո աչքն հանի,

Եսքան ել անգութ գաղան կը լինի...

Տեսնեմ, վոր աղիզ ձեր բալուկներին

Մի նաշում գըրած՝ մի որում թաղեք,

Բուերի նըման վայ տաք ձեր զըլիին,

Զեր կյանքում ուրախ մի որ չտեսնեք...

Սուդ ու շիվանը, լաց ու կսկիծը

Անպակա՛ս լինի ձեր ոջախիցը...

Թընամիների սուր-սուր նետերը

Փըշերի նըման ցըցվեն ձեր մալմնում,
Ձեր միսը լափեն չուն ու գելերը,
ինչպես վոր դուք մեր միսըն եք ուտում...
Ձեր հիշատակը ջընջվի աշխարհից,
վոր մենք աղատվենք ձեզ պես շըներից...

(Մտնում և խրճիր: Գալիս և Դավիթը):

ԴԱՎԻԹ.— Սասմա գյուղերը ծայրե ծայր անցա...
Յեկ ինչքա՞ն ինչքա՞ն նոր բան իմացա...
Հիմա բոլորը տեսա իմ աչքով:
Ինչ վոր յես լըսել եյի ականջով,
ինչպես և քանդել Մըսրա դաղանը
իմ հոր յերկերը, իմ սուրբ վաթանը...
Յեկ քանի՛ տարի գեռ պիտի անցնի,
Մինչե վոր Սասում նոր մեկանց ծաղկի...
Յեկ նա կը ծաղկի, կամի որեցոր
իմ հայրենական յերկիր փառավոր:
Աստվա՛ծ, զորացրու իմ միտք ու հոգին,
վոր լավ ծառայեմ իմ ժողովը դիմի:

(Դավիթը պոկում և շաղգամը և սկսում և ուտել: Խրճիրից
դուրս և գալիս Դյուլնազը):

ԳՅՈՒԼՆ.— Եենթո՛ւկ, հիմի ել շաղգամի՞ց կը պար...
Արարիչ աստված, եսքա՞ն ել խելառ...
ԴԱՎԻԹ.— Նանի ջան, ների՛ր, քաղցած եյի յես:
ԳՅՈՒԼՆ.— Շաղգամի տեղակ դու զըխկուն ուտես,
զոռ ու ցավ ուտես:
ԴԱՎԻԹ.— Ես մի շաղգամով դու աղքատացա՞ր,
վոր ելի եղան սաստիկ չարացար:
ԳՅՈՒԼՆԱԶ.— Աստվա՛ծ, աղատիր ինձ սըրանց ձեռից,
թալանում են ինձ, դըրփում չորս կողմից,

Մըրանց վո՞ր մեկին պատասխանը տամ.
Եսքան դարդերին յես վո՞նց դիմանամ...
Հերիք չեր ասես դըրսի թշնամին,
Տանջվում ենք և մեր յերկրացու ձեռքին...
Ա՛խ, Մըհե՛ր, Մըհե՛ր, լույսհոգի Մըհե՛ր...
Քո վորդին մի՞ց թէ սա պիտի լիներ...
Վոչ ամոթ մընաց աշխարհում, վոչ դութ
Ամեն տեղ ալան-թալան, կողոպուտ:
ԴԱՎԻԹ.— Լավ, նանի, Դավիթին դու մի հավանիր,
Յեկ նըրան ինչքան կուղես, հայհոյիր.
Բայց յերբ զործերը աչքով կը տեսնես
իմ մասին ուրիշ լեզվով կը խոսես:
Ով պիտի նորից կանաչացընի
Սեղան-սարի մոտ իմ հոր անոտառ,
Պարիսպներ քաշի, յերեներ լցնի,
կենդանացընի հին վորսասարը...
Յեկ ա՞յդ և միայն: Այնպես ծաղկեցնեմ
Անապատ դառած մեր խեղճ վաթանը,
Դյուղեր, ալաններ այնպես շենացնեմ,
Վոր ճարի Մըսրա դոսող իշխանը...
ԳՅՈՒԼՆԱԶ.— Յեթե Մըհերի վորդին լինեյիր,
Դու կը թողնեյի՞ր,
Վոր են անորեն մըսրացիները
Գողերի նըման դան մեղ կողոպտեն,
Որը ցերեկով մըտնեն տըները,
Մեր ունեցածը խըլեն ու տանեն...
ԴԱՎԻԹ.— Ի՞նչ է պատահել, թէ աստված սիրես:
ԳՅՈՒԼՆԱԶ.— Հորեղբորըդ մոտ գընա—կը տեսնես:
Մըսրամելիքի քաղցած գելերը

Սուրութուր տոտծ մըսել են Սասում,
Կըրում տանում են մէր վոսկինէրը,
Մէր յոթը տարվա խարջը ժողովում—
Քառում բեռ վոսկի, քառուն կույս աղջիկ,
Քառուն հատ յերկայն, քառուն կարձ
կնիկ:

ԴԱՎԻԹ. — Ե՛յ, քանդվի՛ Մըսուր... Ուղի՞ղ ես
ասում:

ԳՅՈՒԼՆԱԶ. — Աղքատ ու հարուստ ել չեն հարցնում.
Ինձ մոտ ել յեկան... Մի քացի տվին,
Վոր յես ուշադնաց՝ վովեցի դեսին:

ԴԱՎԻԹ. — Հետո՞— քեզանից ել մի բան առան:

ԳՅՈՒԼՆԱԶ. — Աղջրկաս ողը խլեցին տարան:

ԴԱՎԻԹ. — Հեյ-վա՛խ: Իսկ յես գեռ վոչինչ չդիտեմ,
Նանի ջան դըրանց յես վորտե՞ղ զտնեմ:

ԳՅՈՒԼՆԱԶ. — Հորեղբորդ մոտ: Նստած են բակում:
Յեկ կոտըն առած՝ վոսկի յեն չափում:

ԴԱՎԻԹ. — Շո՛ւս արա, Դամի՛թ, հասի՛ր ոգնության.
Յեկել ե ժամը վրեժինդրության...

Առյուծ՝ Մըհերի վորդին չը լինես,
Յեթէ դու դըրանց անպատիժ թողնես:

(Դավիթն արագ հեռանում ե):

ՊԱՏԱԵՐ 5-ՐԴԻ

Զենով-Հոնանի տան բակը: Զախ կողմում տունն ե, վորի
ստորին հարկը պատշաճբով: Տան հանդեպ մարագն ե՝ փակ-
ված դոնով: Մեջտեղ ծառասուն: Հանդիպակաց կողմում բարձր
պարիսպ՝ գոցված դարպասով: Պատշաճմբուռ դրված են վոսկով
լի սուպրակմեր. մուտքի յերկու կողմում կամքնած են մարագի
պահպաններ՝ զինված նիզակներով: Մի ծառի տակ դրված ե

նստարան, վորի վրա նստած ե Զենով-Հոնանի գլուխը կռացքած
և ձեռով բռնած նակատը: Ծառերի յետևից գալիս ե Զենով-Հո-
նանի ծառան:

ԾԱՌԱՆ.— Գինին վերջացավ: Գինի յեն ուղում:
ԶԵՆ.-ՀՈՆԱՆ.— Ինչքան կուղեն, տար: Հի՞ր ես
հարցնում:

ԾԱՌԱՆ.— Վո՞ր դինուց տանեմ՝ կարմի՞ր, թէ ճերմակ:
ԶԵՆ.-ՀՈՆԱՆ.— Իրենք չասադի՞ն քեզ, թէ ինչ տեսակ:
ԾԱՌԱՆ.— Ասացին միայն, թէ «ամենահին»:

ԶԵՆ.-ՀՈՆԱՆ.— Կա տասը տարվա մի դինու կարաս.
Մասանում թաղված. թեկ այդ գինին
Դըրանց հարամ ե, բայց, ե՛հ, ի՞նչ վնաս...
Վերցրու կուժը գընա՛ մառանը
Լըցրու լիք-միք մինչեւ բերանը:

(Ծառան գնում ե):

Ավելի լավ ե սըրաները շահեմ,
Վոր մեր յերկրիցը ուրախ հեռանան,
Բան թէ սըրանցը զինի խընայեմ,
Թող իրենց տեսած հարդ ու պատիվը
Մի առ մի պատմեն Մըրամելիքին,
Իցե թէ Սասմա բաղդի անիվը
Զարիցըն անցնի, պըտընի բարին:

(Փողոցում լսելի յի աղմուկ):

ԶԱՅՆԵՐ. — (Դրսից) բա՛ց արա դուռը... Ե՛յ...
ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ...

(Խփում են դրան):

ԶԵՆ.-ՀՈՆԱՆ.— (Դոնապանին) Այդ ինչ աղմուկ ե...
Ո՞վ լսից դըսան...

ՀՐԱՆՍՊՈՅՆ.—ԺՈՂՈՎՈՒՐԵԸՆ է խմբվել վողոցում.

Վորը լալիս ե, վորըն անիծում:

ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Դուռը բաց չանես: ԵՇ, բարեկամներ,
Ավելի լավ է, քաշվեք ձեր տըներ:
Իզո՞ւր եք լալիս, իզո՞ւր բառաչում,
Հորթերը կորցրած կովերի նման
Իզուր եք «մայրի՛կ» ու «աղջի՛կ» կանչում.
Նըրանք ձեղ համար կորան հայիսյան:

(Փողոցում աղմուկը սաստկանում է: Կանանց աղաչափը կամ անհեծը, մանկանց նիշն ու լացը, տղամարդկանց սպաննալի քը—բոլորը միախառնին են և մի սարսափելի, դժոխային ժխոր առաջացրել):

Կոչի՛նչ չեմ կարող անել, սիրելի՛ք.

Իզուր են և լաց և սպաննալիք:

(Ճաշից վեր կացած՝ գալիս են կոսրադին, Զարխաղին, Բադին և Սյունին. բոլորն ել զինու ազդեցուրյան տակ են):

ԿՈՍԲԱՐԻ-ՀՈՆԱՌՆ.—ՀոնաՌն, մաշալաՌ, լավ պատվեցիր մեզ:
ՇԵՆՈՐՀԱԿԱԼ եմ, կեցցեՌ զու, կեցցեՌ:

ՀԱՐԽԱՐԻ-ԴԻՆ.—Ի՞նչ տեսակ-տեսակ համեղ խորակիներ,
Ի՞նչ հիանալի, անուշ զինիներ:

ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.—Զեղ պես թանկադին հյուրերի
համար:

ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆը ծառա յե խոնարհ:

ԿՈՍԲԱՐԻ.—Դե՛չ, բարեկամնե՛ր, հիմա ըսկսենք:

Մընաց չը չափված յերեք բեռ վոսկին.

Այդ ել մենք այսոր կը վերջացընենք

Յեկ վաղ առավոտ արեածագին

Մենք մեծ քարվանով ճանապարհ կընկնենք:

(Վերցնում ե կուռք):

Զարխարէին, պահի՛ր: (Զափում ե): Մեկ,
յերկու, յերեք...

(Փողոցում աղմուկն ավելի և ավելի սաստկանում է: Ամբոխի միջից լսնի յե Դավթի ձայնը):

ԴԱՎԹԻ ԶԱՅՆԻ.—Հեռացէք, ճամբաՌ, ինձ ճամբաՌ տվեք:

(Դուռը սկսում են չարչարել):

ԴԱՎԹԻ ԶԱՅՆԻ.—Դուռը բա՛ց արա, հորեղբա՛յր
Հոնան:

ԿՈՍԲԱՐԻ-ԴԻՆ.—Պինդ պահի՛ր դուռը, ե՛յ դու, դոնապան
Ե՛յ պահապաններ, զգա՛ստ, պատրա՛ստ
կացեք.

ԴԱՎԹԻ-ԶԱՅՆԻ.—Կոտրեցի դուռը-դո՛ւռը բաց արեք.
ԶԵՆՈՎ-ՀՈՆԱՆ.—ԴավիՌ, քե՛զ մատաղ, զընա՛,
Հեռացի՛ր:

(Դուռը սկսում են չարչարել):

ԶԱՅՆԵՐ ԴՐՍԻՑ.—ՏԵ՛Ռ զընանը... զե խի՛ր...
Հարդի՛ր...

(Ուժգին հարվածներից դուռը վայր է ընկնում: Մտնում է Դավթիքը՝ անոելի իր դեմքի արտահայտուրյամբ: Նրա յերեկից մերս և խուժում ամբոխը-խոսնեմապան բազմուրյամ՝ ծեր, մանուկներ, կանայք, աղջկերք, յերիտասարդներ: Դիմադրող պահապաններին աչ ու ձախ հասցրած հարվածներով գորում չ գետին: Հետո կոսրադինի մեռքից խլում է կոտը):

ԴԱՎԹԻ.—Զափել չգի՛ռեք... թողե՛ք յես ափեմ...
Մեկ, յերկու, յերեք, չորս—և վերջ արդեն:

(Ամեն անգամ խփում է կոսրադինի և մյուս յերեք մարտիների յերեսներին և արենուում նրանց դեմքիքը: Զենվ-Հոնան սը սարսափած բռնում է Դավթի ձեռքից և աշխառում է նրան պահել):

ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Դավիթ, խելքի յեկ, այդ ի՞նչ ես
 անում . . .

ԴԱՎԻԹ. — Մի՞թե չես տեսնում . . . Վոսկի յեմ չա-
 փում . . .

ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — 'Վա՛յ մեզ, կորած ենք . . .

ԶԱՅՆԵՐ. — Վո՛չ, մենք փըրկված ենք . . .

ԶԱՅՆԵՐ. — Փըրկված ենք, փըրկված . . .

ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Կորած ենք, կորած . . .

ԴԱՎԻԹ. — Դե՛ անկոչ հյուրեր, ձեր յեկած ճամբով
 Դուք ձեր յերկիրը կդառնաք կըրկին
 Յեկ ինչ վոր այստեղ տեսաք ձեր աչքով,
 Մեկ մեկ կը պատմեք ձեր ուղարկողին;
 Թող նա իմանա, վոր այսուհետեւ
 Սասմա յերկընքում փայլեց նոր արև,
 Յեկ, թեև չկա գյուցազն Մըհեր,
 Նըրա զավակը կենդանի' յե դեռ;

ԿՈՍԲԱԴԻՆ. — Վա՛յ ձեզ . . . ձըմարիտ մի խոռք եմ
 ասում .

Յերեք որ չանցած՝ կորած և Սասում . . .

ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — (Ծնկաչով) Ա՛խ, ներում արեք,
 տարե՛ք ձեր վոսկին,
 Մի՛ հայանեք վոչինչ Մըրամելիքին . . .

ԴԱՎԻԹ. — (Վեր կացնելով) Վե՛ր կաց, ամո՛թ և,
 այդ ի՞նչ ես անում . . .

Դու ինձ սըրանց մոտ դետին ես կոխում . . .

Մի՞թե Մըհերի յերայրն ես դու . . .

Մի՞թե դու նըրա անվեհեր հոգու
 հեսըն ել չունիս . . . Ա՛խ, Մըհեր, Մըհեր . . .

(Մարագից լսում են կանացի աղաղակներ և լաց ու կոծի
 աղխողորմ ձայներ):

Յ.յա ի՞նչ ճայներ են . . . ի՞նչ աղաղակներ . . .

(Սուսնում և մարագի դռանը):

Նըրանք ուրեմն այստեղ են փակված . . .

Ժողովուրդ, յեկեք, մի ականջ դըրնք:
 Ի՞նչ հեկեկանքներ . . . ի՞նչ վողբեր ու լաց . . .

Այս տեսակ ձայներ լըսած չեմ յերբեք . . .

Այս աղիողորմ հառաշանքներից
 Քար սիրտը նույնիսկ կը պատռվեր միջից,
 Իսկ դու, ո՞ Հոնան, քարից ել վատթար . . .

Ասա՛ ինձ, ինչպես դու կարողացար
 Այս դըժոխային տանջանքը տեսնել,
 Այս կըսկծալի վայունը լըսել,
 Յեկ ելի մընալ այդչափ անըզգա . . .

Հոնա՛ն, քո սըրտում խըղճմըսանք ըլկա . . .

Զա՛ն, իմ քույրիկներ, ջա՛ն, ազիզ մայրեր,
 Լըուեցե՛ք, թողե՛ք ձեր սուդ ու շիվան,
 Ահա՛ — կոտրում եմ ձեր բանտի գըոներ,
 Յեկ հասալ ժամը ձեր աղատության . . .

(Դավիթը բաց և անում մարագի դուռը, վորտեղից դուրս
 են քափվում կանացի և աղջկերք: Ամրովը խոնվում և նրանց
 հետ, և խանճիմաղան աղմուկ և բարձրանում: Ամենքն իրար
 են վիտում և միջյանց գտնելով՝ զրկախառնվում, համբուր-
 վում են ուրախ բացականչություններով. «Մայրիկ շան»,
 «Աղջկիկ», «ազի՛զ», «քալե՛ս . . .»):

ԴԱՎԻԹ. — Դե՛, ժամանակ և, ձիերըն հեծե՛ք
 Յեկ դեպի Մըսուր թըռե՛ք դընացեք:
 Բայց մի դուցե թե մի ուրիշ անդամ
 Սասմա աշխարհում ձեր չողքը տեսնեմ:

Գիտցած յեղեք, վոր յես կոչում նըման
Զեզ խկույն և յեթ կանհետացընեմ:
(Կոբաղինը իր ընկիրների հետ հեռանում է):

ԶԱՅՆԵՐ.— Փըրկված և Սասում... Գընա՛ց թըշ-
Կեցե՛ Մըհերի արժանի վորդին...

ՊՈ.ՏԱԵՎԸ 6.-ՐԴ:

Մարամելիքի ապարանիքի վերնահարկում նեմելիք: Արաբական մոզայիբով զարդարված սյուներ, վորոնք վերելում միանում ունեցանել կամամերով: Ճեմելիքից յերելում են հեռու ընկած լուսներ, վորոնց ստորոտում ընդարձակ դաշտավայր՝ իր վոլորապուույտ մեծ նաևպարհով: Ճեմելիքում դրված և մի վափառուկ գահակորակ, ծածկված կերպառով և լոսկեկար քավ-վափառուկ գահակորակ, ծածկված կիճիք քեք ընկած՝ ծխում և շյա մուրաքաններով: Մարամելիքի կիճիք քեք ընկած՝ ծխում և շյալան: Սյուների մոտ կանգնած և Մարամելիքի աղջիկը՝ յերեսը դեպի մեծ նաևպարհը և այսում և հեռան:

ԼԵՅԼ.— Մայրի՛կ, դալիս են... դուրս յեկան ձոռ-
րից...

ԻՍՄԻԼ-ԽԱՆՈՒԽՄ.— Լալ, մի՛ խենթանար ուրախու-
թյունից:

(Վեր և կենում, գնում աղջկա մոտ):

ԼԵՅԼ.— Ա՛յ, տեսնում ես այն ձիավորներին,
Հեռու, շատ հեռու, ձորի բերանին:

ԻՍՄԻԼ-ԽԱՆՈՒԽՄ.— Մերոնք չեն, մերոնք ուզտերով
կդան:

ԼԵՅԼ.— Ինչո՞ւ ուրեմն այսքան ուշացան:
Ա՛յ, մի շուտ զային... ի՞նչ կուրախանանք...
Մեկ ել կը տեսնենք— զըրա՞նդ-հա-զըրա՞նդ
Իրար հետեվից բարձած ուզտերը
Քերում են ահա վոսկու բեսները...

Քառո՞ւն բեռ վոսկի-հեշտ բա՞ն և ասել
Ախ, մայրի՛կ, ի՞նչեր կարող ենք անել...
ԻՍՄԻԼ-ԽԱՆՈՒԽՄ.— Ի՞նչ պիտի անես:

— Կանեմ— կը տեսնես:
Այենից առաջ ճակատիս համար
Ցես պիտի շինեմ մի լալ վոսկեշար.
Հետո՝ այնպիսի դեղեցիկ մանյակ,
ի՞նչ տեսակ-տեսակ ապարանջաններ,
Վոր ամբողջ կուրծքը վիայի վոսկու տակ.
Ի՞նչ շրջեղ քամար, մատանիք, ողեր...
Մի խոսքով պիտի լույս-արև դառնամ,
Արեգակի պես վիային ու չողամ...

ԻՍՄԻԼ-ԽԱՆՈՒԽՄ.— Խոկ յես՝ տան յեղած բոլոր
Հասարակ

Թասեր, դավաթներ, կրժեր, ախսեներ
Վերցընեմ պիտի և նըրանց տեղակ
Թաղերում շարեմ վոսկի անոթներ:
ԼԵՅԼ.— Ի՞նչ լալ կը լինի, ի՞նչ հիանալի.

Ուր վոր կը նայես— բոլորը վոսկի:

(Մտնում և Մարամելիքը: Դում մեջ կանգնելով՝ ծանր շում և քաշում):

ՄՍՐԱՄԵԼԻՔ.— Ոխ, իմ ծերությո՞ւն... շուտ վըրա
Հասար...

ԼԵՅԼ.— Հայրի՛կ, դու յեկա՞ր:

(Մոտենում և հորը)

ՄՍՐԱՄԵԼԻՔ.— (Բոնելով աղջկա գլուխը և համ-
բուրելով նակատից):

Քաղցրի՛կս, այսոր վերջապես կը դան:

ԱԵՅԱ. — ԵԼ յԵ՞ՐԲ : ՄՈՒԾ ընկավ, իսկ նըրանք չկան :
 (Մորամելիքը բեք և ընկնում քախտի վրա) :

Հա՛յր, ի՞նչ պիտ անես դու այնքան վոսկին .
 Մեզ բաժին կը տա՞ս — ինձ ու մայրիկին :

ՄՄՐԱՄ. — Ձեղ ել, սիրունը, բաժին կը հանեմ,
 Թեպետ յես վոսկու մեծ կարիք ունեմ :

Շատ ծըրագիրներ կան իմ առաջին .
 ՄԵծ փայլ պիտի տամ մեր ամարաթին :

Ամենից առաջ իմ այս պալատը —
 Աստիճանները, սյուները, պատը —

Բոլորը պիտի զարդարեմ վոսկով,
 Այնպես վոր դըրսից արտաքին տեսքով

Շողշողայ, ինչպես լույս արեգական :
 Յերբ Մըսուր մըսոնի մի ոտարական,

Թո՛ղ ըսքանչանա, ինձ տա յերանի
 Յեվ իմ համբավը ամեն կողմ տանի :

Տեսնեմ այնուհետ ել վո՞ր իսալիֆան
 Պիտի պարծենա իր ճոխ պալատով

Յեվ հարստությամբ, յերբ Մըսրա հսկան
 Իր ամարաթը կը ծածկի վոսկով :

Ամեն տեղ՝ Հալեպ, Դամասկոս, Բաղդադ
 Հայանի կը լինի իմ շքեղ պայտա :

(Մտնում են Կոսրադին և Զարխադին յերեսները կապած) :

Այս ի՞նչ եմ տեսնում... ի՞նչ ե պատահել...
 Ո՞վ համարձակվեց ձեղ վիրավորել :

ԿՈՍԲԱԴԻՆ. — ՏԵ՛ր, յեթե ամբողջ Մասումը քան-
 դենք,

Յեթե այդ յերկրի բընակիչներին
 Բոլորին մեկ մեկ սրբի անցընենք,
 Հետո բոլորը հանձնենք կըսակին ,

Դեռ ելի քիչ ե այդ ժողովրդին :

ՄՄՐԱՄ. — Ո՞ւր ե Դավիթը... ինչո՞ւ ըղթայած
 Նըրան չեմ տեսնում իմ առաջ կանդնած :

ԶԱՐԱԴԻՆ. — Ինչպես վոր դատարկ մենք դընացել ենք,
 Այնպես ել դատարկ վերապարձել ենք:

Յեվ յեթե մի բան բերել ենք — ահա
 Այս վերքերըն են մեր գեմքի վըրա :

ՄՄՐԱՄ. — Իսկ յոթը տարվա իմ խա՞րջը — լոսկին...

ԿՈՍԲԱԴԻՆ. — Այս հազա՞ր անեծք Մասմա ծուռ
 Դավիթին,

Կանայք, աղջկերք, վոսկին — բոլորը
 Արդեն պատրաստ եր, և մյուս որը
 Վճռել ելինք մենք ուղտերը բարձել,
 Յեվ մեծ քարվանով ճանապարհ ընկնել:
 Բայց Դավիթ յեկավ, մեր վոսկին իւլեց,
 Ազատեց կանանց
 Յեվ կույս աղջկանց
 Յեվ մեղ ել ահա՛ այս որը գըցեց...
 ԶԱՐԱԴԻՆ. — Մեր արյունը, տեր, վըրեժ ե կան-
 չում :

ԿՈՍԲԱԴԻՆ. — Զենով-Հոնոնի տան պատշամբում
 Զամիում ելինք մենք հավաքած վոսկին —
 Հանկարծ փողոցում աղմուկ և լըսկում,
 Հայհոյանք և ճիչ ամբոխի միջին :
 Այնքան հըրեցին, վոր գուռը բացվեց,
 Դավիթը մըսավ աչքերը կարմրած,
 Նըրա յետեց ամբոխը խուժեց
 Գոռում-դոչումով, անչափ կատաղած
 Յեկավ Դավիթը և կոտը իւլեց
 Աւ ասաց. «Թող յես չափեմ այդ վոսկին»...

Ու հետո հարված հարվածի յետքից
կոտով հասցըեց մեր քիթ-պոռւնդին...
Արյունը խըփեց բացված վերքերից,
կարմիր ներկելով շորեր և գետին...
ՄՍՐԱՄԵԼԻՔ.—Յեկ դուք լուռ ու մունջ բոլոր
տարաք...

Յեկ թողիք, վոր նա այդպես խայտառակ
ծեծեր, անարդեր իմ ծառաներին...
Յեկ կոտով ապտակ տար ձեր գընչերին...
ինչո՞ւ դուք իսկույն
Նըրա գըլուխը չջախջախեցիք,
Միթե չունեյիք մի սուր, մի դաշույն,
Վոր նըրա լէցը գետին թափեյիք...

ԿՈՍԲԱԴԻՆ.—Ղուրանը վըկա, Դամիթը հիմա
Մի ազրահել ե, մի մեծ աժդահա;
Ուղիղ եմ ասում, յերք զոռում եր նա,
Սարսափ եր բերում ամենքի վըրա,
Կարծես թե առյուծ լիներ մըռընչում,
Յերբ կես դիշերին վորսի յե գընում...
Յերբ նա թերթում եր կարմիր աչքերը,
Կարծես աչքերից կըրակ եր թափում,
Իսկ յերբ փոխում եր ուժեղ վոտները,
Ծառը դողում եր, տերեվը շարժվում...
Յերկու բըռունցքով, յեթե կամենար,
Նա մեղ բոլորիս կը ջնջեր իսպառ:

ՄՍՐԱՄ.—Վըրե՛ժ, ո՛, վըրե՛ժ...ինչպես կուզեյի,
Վոր այդ գարշելին մի ձեռըս ընկներ...
Յես նըրան այնպես բըռունցք կըտայի,
Վոր իր ծընընդյան ու որը հիշեր...
ԿՈՍԲԱԴԻՆ.—Հիմա Դամիթը մենակ չե, տե՛ր իմ,

Ամբողջ Սասումը կանդնած ե մեջքին:
ՄՍՐԱՄ.—Իսկ Զենով-Հոնան...նա ե՞լ նրանց հետ:
ԿՈՍԲԱԴԻՆ.—Ե՛ւ, նա համարյա չկա այսուհետ:
ԶԱՐԱՄԵԼԻՔ.—Ժողովրդի մեջ ել ձայն չունի նա.

Ամենքի աչքից ընկած ե հիմա:
ՄՍՐԱՄԵԼԻՔ.—Ե՛ւ, բավական ե: Հիմա լըսեցեք

Յեկ հըրամանըս լավ կատարեցեք:
Յես պահանջում եմ ձեղանից շուտով
Յերկուումըս անել մեծ զորաժողով:
Հասակների մեջ խըտրում չըլինի.
Յուրաքանչյուրը զենք պիտի տոնի,
Անբեղ պատանի և թե ալեվոր
Հաշվում ե դինովոր:

Ով վոր կարող ե սուր ու թուր չարժել,
Ով վոր կարող ե նետ-աղեղ բռնել,

Բացի կանանցից
Յեկ մանուկներից,
Բոլորը պիտի անհապաղ յելնեն
Յեկ Մըրա դաշտում մեկ տողովկեն:
Բայց այս ել ասեմ, վոր ել չնայեք.
Ով հակառակվեց, ուժով կը տանեք:

ԿՈՍԲԱԴԻՆ.—Աչքիս վըրա տե՛ր: Յես խոստանում եմ.
ՄՍՐԱՄԵԼԻՔ.—Կոսրադին, յես քեզ նշանակում եմ,

Զորքիս զըլիսավոր հրամանատարը.
Իսկ դու, Զարիսադին, դու ել կը լինես
Սրբա հնազանդ կամակատարը:

ԶԱՐԱՄԵԼԻԴ.—Խոնարհ ծառադ եմ. ինչպես կը վճռես:
ՄՍՐԱՄԵԼԻՔ.—Հաշված եմ արդեն Սասմա որերը,

Յեկ վա՛յ ապլատամբ այդ ժողովըրդին,
Յերբ վոր իմ զորքի աշեղ զնդերը

Կր Հասնին այդ պիղծ, անիծյալ յերկրին...
 Յեթե ձեր սրբառում մրնացել ե դեռ
 Թրդի մի նրգույ.— Խեղդե՛ցեր խապատ,
 Աղաշանը և յաղ և արտասուքներ
 Նուանակություն չունին ձեզ համար:
 Չեր դործը յինի— արհամինը սրինել,
 Ամերել, քանդել, ալրել, կոտորել...
 Թե ծեր, թե մանուկ, տրդամարդ թե կին—
 Սրբի անցնել և թափել դետին:
 Հըրդէնել դուռեր, ավաններ, ցանքներ,
 Խսպառ կործանել վանքեր, տաճարներ...
 Քար քարի մըրրա հրպետք ե մրնա,
 Սասումը պիտի անապատ դառնա:
 ԿՈՒԲՈՂ. — Տե՛ր յիմ, ոռ կամքը սուրբ ե մեղ Համար:
 ԶԵՐԻԱԴԻՆ. — Կը լինի այնպես, ինչպես կամեցար:

(Կոսրադին և Զարխադին խոնարի գլուխ տպով հեռանում են):

ԼԵՅՈ. — Անսո՞ս մեր հույսեր... բոյո՛րը կորավ...
 ՄՄՐԱՄ. — Յես հիմարացա: Յերբ Մրգեր մեռավ,
 Դայթին ել խոկուն պիտի վերջ տայի.
 Յեմ մորորդ խոսքին ականջ չանելի:
 ԻՄՄԻԼ-ԽԱՆՈՒՄ. — Դավիթ մանուկ եր, յերբ դու
 ինձ առար.
 Անտեր մրնացած մի վորբ եր թրցմատ,
 Ի՞նչպես թրդնելի, վոր իմ զավակին:
 Մատադ անելիր աչքիս առաջին:
 ՄՄՐԱՄԵԼԻՔ. — Կարծես թէ բարի մի պլատուղ եր նա.
 Գործերը տեսա՞ր— դե հըրծվիր հիմա:

ՊՍ.ՏԱԵՐ Հ.ՌԴ

ԶԵՄՈՎ-ՀՆԻԱՑԻ տաճ բակը— հինգերորդ պատկերի տեսա-
 րանը: Դրսից զայխս եր ԶԵՄՈՎ-ՀՆԻԱՑ սաստիկ տխուր կ վը-
 հատած: Սասիան, նրա կիթը, վորը պատշգամբում նստած՝ կար
 եր սեռում, նկատելով ամուսնու այլայլած դեմքը, իմբն ի
 նը հազիվ ե կարողանում վոտի վրա կանգնել և որորմելով հ-
 րան նետում ե ծառի մոտ, վորի տակ դրված ե նստարան: այն-
 տեղ նստում ե հանգստանուու: Լսեի յեն նրա քոյլ հառաջնե-
 րը, ինչպիս իիվանդի կամ սաստիկ վիառված մարդու: Սասիան
 օգում ե կարը և շտապում ե նրա մոտ:

ՍՍՈ. — Հոնան, հի՞վանդ ես... թէ՞ ելի նոր լուր...
 Ի՞նչ է պատահել... ինչի՞ յես տխուր:
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Ել մի՛ Հարցընի, Սառիա... քիչ ջուր:
 (Սառիան գնում ե ջրի):

Ոչ, մեռա՛, մեռա՛... ի՞նչ որի հասանք...
 Սա հո կյանք չե, այլ միմիայն տանջա՞նք:
 (Սառիան գալարով ջուր ե բերում. նա խմում ե)
 ՍՍՈՒՄ. — Զարմանալի յե, առողջ գուրս յեկար,
 իսկ վերադարձար գունատ և տկար:
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Վա՛յ մեկ Սառիա, վա՞յ մեր գըլխին...
 ՍՍՈՒՄ. — Զինի՞ նորից Սասմա թընամին...
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Այս, նա... անթիվ զորքեր ե բերել,
 Սեղան-սարի մատ բանակը գըրել:

ՍՍՈՒՄ. — Ել ի՞նչ ենք նըստել... փախչենք սարերը...
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ. — Ի՞նչ ոգուտ յերբ վոր նըրա գնդերը
 Մեր բոլոր յերկիր պիտի հեղեղեն.
 Ուր վոր ել զընանք, մեզ պիտի հասնեն:
 ՍՍՈՒՄ. — Դավիթ նըղովյալ լինի քո անուն.
 Այս ինչ կըրակ ես մեր գըլխին թափում...

ԶԵՆ-ՀՈՆԱՆ — Այդ խելագարը յեթե չը միներ,
 Մելիքըն ինչո՞ւ մեղ պիտի հիշեր :
 Քանի տարի յե , վոր մեղ մոռացած՝
 Վոչ նեղում եր մեղ , վոչ խարջ պահանջում ...
 Ուրախ եյինք մենք , մեղ հետ եր աստված ,
 Խաղաղություն եր չորս կողմը տիրում .
 Ապահով եյինք , դոչ և բաղդավոր
 Հովիվ , հովագործ և արհեստավոր ...
 Հիմա ամեն տեղ սարսափ , ահ ու դող ,
 Հուսահատություն և իրարանցում ,
 Յել ամեն մեկը գոլիխն շողացող
 Մըսրացոց արնոտ սուրըն և տեսնում ...
 Վա՞յ մեղ , զուր են մեր բոլոր ջանքերը ,
 Զուր են գանձերը թաղում հողի տակ ,
 Թողնում տուն ու տեղ , փախչում սարերը —
 Զուր և բոլորը և աննպատակ .
 Վոչ սար ու ձորեր , վոչ մութ քարանձավ
 Մեղ չեն ողնելու . մեր վերջը հասավ :
 (Մտնում է Դավիթը՝ անհանգիստ և փորկոտ) :

ԴԱՎԻԹ — Հորեղբա՛յր , ցո՞յց տուր վո՞րտեղ են իմ
 Հոր
 Հաղի չորերը , և զենք ու զրահ ...
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ — Ելի յե՞րազ ես տեսել դու այսոր :
 Ի՞նչ հադի չորեր , ի՞նչ զենք ու զրահ ...
 ԴԱՎԻԹ — Բեր այստեղ իմ հոր կապեն-խարուկին ,
 Խաչ-պատարագին աջ թելի վըրա ,
 Վոսկի քամարըն ու գըլիխ դյուտին ,
 Բեր այստեղ իմ հոր կայծակի թուրը
 Յել հըրեղեն ձի՝ Քուսկիկ-Զալալին :
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ — Ելի պառա՞վը տվեց այդ լուրը :

ԴԱՎԻԹ — Եյո , պառավը իմ նանին ասաց ,
 Վոր այդ ամենը քեզ մոտ և պահված :
 ԶԵՆ-ՀՈՆԱՆ — Նա ջաղու կին է , հավատա՛ , Դավիթ ,
 Մի լըմիր նրա ամեն մի խոսքին .
 Մի որ ել փորձանք կը բերի գըլսիդ ,
 Ինչպես արել և նա շատ շատերին :
 ԴԱՎԻԹ — Հորեղբայր , դու ինձ ուզում ես ցանե՞լ ...
 Զուր հոգուս վըրա մեղք մի վեցընի .
 Պառավից յես միշտ լավըն եմ տեսել ,
 Ինչքան ել վոր նա կովարար լինի :
 Յերբ մեսավ Մըհեր , դու ել լավ դիտես ,
 Վոր քո տան մի խեղճ վորք մընացի յես ,
 Վոր քո կը կընկա խելքով վեցըըիր
 Յեկ դու քո կընկա խելքով վեցըըիր :
 Զենիցըս բըռնած՝ դուրս վըռնդեցիր :
 Բայց այն պառավըն ինձ իր մոտ տարավ ,
 Պահեց , մեծացրեց , տերություն արավ :
 Իմ հոր գործերից անտեղյակ ելի ,
 Բան չեյիր ասել , ի՞նչ իմանայի ...
 Յեկ նա շատ բաներ պատմեց Մըհերից ,
 Յեկ յես իմացա միայն նըրանից ,
 Թե ո՞վ եր Մըհեր և ո՞վ և Դավիթ ...
 Յես հիմա ի՞նչպես հավատամ խոսքիդ :
 Ինձ ուամիկ հովիկ ընկեր ընեցիր
 Յեկ մի ահագին մահակ տալով ինձ
 Ու մի ջուխտ սոլեր այսպես ասացիր .
 «Պարապ մի՛ նստիր , գընա սարերը
 Արածացըըու այստեղ գառները» :
 Յես ել զընացի ; Մըհերի տըզան
 Դարձավ գառնարած , ինչպես մի անբան :—
 Բայց այն պառավըն ինձ լավ խըրատեց ,

Հորս գործերը առաջըս դըրեց...
 Ու կամաց կամաց աչքըս բաց յեղավ,
 ինչ վոր մութըն եր բոլորը տեսավ:
 Յես նըման եյի մի անասունի,
 Վոչ դատողություն և վոչ իմելք ունի:
 Բայց պառավը՝ իմ աչքը բացեց,
 Ու յես աշխարիս չարըն ու բարին,
 Վոր ծածկված եր սեվ խավարի միջին,
 Կայծակի բոցոտ լույսի մեջ տեսա:
 Ու յես վըճուցի իմ հոր արժանի
 Ժառանդը մինել,
 Սասմա անորեն թըշնամիների
 Բերանը պատռել:
 Յես կը մոռանամ քո աղ ու հայը,
 Վորովհետեւ գու յեղբորըդ վորդուն,
 Դուրս վըռընդեցիր ինչպես քոսոտ շուն...
 Բայց նա, որստացավ ծընողի նըման,
 Ինձ տարավ իր մոտ և կերակըրեց,
 Վոր վերջի վերջո նա ինձ մարդ շինեց:
 Ահա թե ո՞վ ե այն ջադու կինը:
 Հիմա հասկացա՞ր գու նրա զինը...
 Դե՛մ, բավակա՞ն ե... Քո բարի կամքով
 Լավ և ուղածըս դընա բեր չուտով:
 Տես, չեմ հարցընի, հորեղբա՛յր Հոնան,
 Ոտար ես դու ինձ, թե մոտ աղդական:
 ԶԵՆ-ՀՈՎՆԱՆ.— Մի ասա, տեսնեմ, ի՞նչ պիտի անես
 Հորըտ չորերը... Դու պիտի հաղնե՞ս:
 ԴԱՎԻԹ.— Հորս չորերը յես պիտի հաղնեմ,
 Կայծակի թուրը քամարիս կաղեմ,
 Ու հեծած իմ հոր Քուռիկի-Ջալալին

Դըսով պիտի տամ Մըսրամելիքին:
 ՁԵՆ-ՀՈՎՆԱՆ.— Ես վեր կառնի քեզ գետնովը կը տա—
 Սաղ տեղըդ միայն ականչըդ կը մսա:
 ԴԱՎԻԹ.— Սյդ մեսք դեռ հետո, հետո կը տեսնենք:
 ԶԵՆ-ՀՈՎՆԱՆ.— Համբէտ, արք մի խորհուրդ անենք:
 Վատ ժամանակ ե, հասառ մի մինիր:
 Ծես ապրած մարդ եմ, իմ խոսքն լըսիր:
 Կորած և Սասում, մենք ել ենք կորած:
 Լինելու յե մեծ, շատ մեծ կոտորած:
 Մըսրամելիքը յերդում և կերել
 Սասում ամայի անապատ շինել:
 Ուրիշ ճաք չկա: Արի վեր կենանք
 Ժողովըդի հետ Սեղան-սաք զընանք.
 Մըսրամելիքի վատքերըն ընկնենք,
 Պազնենք փեշերը, աղաչանք անենք,
 Թող սըրտի ուղած խարչերն առնի,
 Թող ինչքան կուզե գերիներ տանի:
 Մեր կույս աղջըկանց
 Ու ջահել կանանց
 Միայն խընայի մեզ ու ձեռ չտա
 Ու յեկած ճամբով ելի յետ գընա:
 ԴԱՎԻԹ.— Ինչե՛ր ես տանւմ, հորեղբայր Հոնան...
 Վա՞յ, ի՞նչ ասեմ քո արդամարդության...
 Մըհերի յեղբայր— ու այսքան վախկոտ...
 Հորեղբա՛յր Հոնան, ամո՛թ և, ամո՛թ:
 ԶԵՆ-ՀՈՎՆԱՆ.— Այն ձեռքը, վոր դու չես կարող
 կտրել,
 Լսում ես, Դավիթ— պետք և համբուրել:
 ԴԱՎԻԹ.— Այ քեզ մի հիմար ըստրուկի տոած...
 ԶԵՆ-ՀՈՎՆԱՆ.— Հապա ի՞նչ անես, յերբ վոր քո դիմաց

Անթիվ անհամար զորքեր են կանգնած:
 Յերբ վոր հաշիվ կա ծովի ավաղին,
 Իսկ հաշիվ չը կա թըշնամիներին...
 ԴԱՎԻԹ. — Դավիթ մենակ չե, ունի ընկերներ,
 Զինված ու պատրաստ հաղար կըսրիմներ...
 Դե, բերում ես, բեր կամ տեղըն ա'սա
 Ես ըշտապում եմ... ժամանակ չկա:
 ԶԵՆ-ՀՈՒՍՆ. — Շըվարել եմ յես... Աստված, ի՞նչ առ
 նեմ...
 ԴԱՎԻԹ. — ԶԵ՞ս ուզում բերել — ինքըս կը մըտնեմ,
 Տակ-դըլուիս կանեմ քո բոլոր տունը,
 Ինչ վոր ուզում եմ, յես այն կը գըտնեմ,
 Ու վերջը կը մընա քո վատությունը:
 (Դավիթը գնում է տան մերը):
 ԶԵՆ-ՀՈՒՍՆ. — Դավիթ, սիրելիս, աստծուն նայիր:
 ՄԱՐԻԱ. — Դե դու ել, Հոնան, յետելից հասիր:
 Ինչ վոր ուզում ե, տուր իրեն կորչի,
 Իր հոր թողածը թող գըլիին կըպչի:
 (Զենով-Հոնանը գնում է Դավիթի յետելից. Ֆիշ հետո վե-
 րադանում է):
 ՄԱՐԻԱ. — Հը, աղատվեցի՞ր այն պատուհասից,
 ԶԵՆ-ՀՈՒՍՆ. — Ինչպե՞ս լաց յեղավ ուրախությունից.
 Յերբ տեսավ իր հոր թողած չորերը,
 Համբուրեց թուրը, խաչը, զենքերը...
 ՄԱՐԻԱ. — Կարծում ե, թե հաղին ունենա
 Մըհերի չորը, Մըհե՞ր կը դառնա:
 ԶԵՆ-ՀՈՒՍՆ. — Յերեվի, խելքըն այդքան ե կըտրում:
 ՄԱՐԻԱ. — Հիմա ի՞նչ անենք, քեզ եմ հարցնում:
 ԶԵՆ-ՀՈՒՍՆ. — Ի՞նչ պիտի անենք: Մեր հույսը՝
 աստված:

Թող նա մեղ դըթա, լինի վողորմած:
 Իցե թե մեր լաց ու արտասուքով,
 Մեր աղաչանքով և ընծաներով
 Թըշնամու սիրալ կարենանք շահել:
 Ու այսպես մի կերպ Սասումը փրկել:

Գալիս ե Դավիթը՝ կերպարանափոխված: Հազած ե իր հոգ
 կապեն, մեջին մի քանի տակ փաքաքած քամարը, աջ թիվը
 վրա խաչած նշան «Խաչ պատարագին». գլխին դրած ե սազա-
 վարու— «Պատարին». կողից կապել ե յերկայն սուրբ— «Քուր-
 կայծակին». կըդիմ ունի զրահ: Այսպիսի զգեստով նա դարձել
 է մի իսկական դյուցազն և զեղեցիկ տղամարդ: Նրան անմե-
 րուն պես Սատիան բմծիծաղով ասում է Հոնանին):

ՄԱՐԻԱ. — Գոտին քառասուն վաթ ե տվել,
 Թուրը գետնին քաշ ե ընկել:
 ԶԵՆ-ՀՈՒՍՆ. — Դու դեռ պըստիկ ես այդ շորի համար:
 ԴԱՎԻԹ. — Աչքըդ կը սովորի—կը լինի հարմար:
 Եխումա՞յս, հորեղբա՛յր... վե՞ր կառնի
 աստված:

Մըհեր այս տեսակ գանձ լինի թողած,
 Յես բան չիմանա՞մ, ինձանից ծածկե՞ս,
 Մըհուկների մեջ պինդ վակած պահե՞ս...
 Ինձ հայտնի յեր, վոր միայն դեվերը
 Սիրում են ծածկել իրենց զանձերը
 Հեռու տեղ, խափար քարանձավներում,
 Մութըն աշխարհում:
 Վոչ իրանք են այն գանձերից ողտվում
 Վոչ ուրիշներին թողնում մոտենալ...
 Նրանք դեվեր են, զու— մարդ կատարյալ:
 Շատ յերկոտըն ես, յես ու իմ հոգին...

Ե՛ս, հիմա մընաց Քուռկիկ-Զալալին :
Գընամ նըրան ել հանեմ ախոռից :
(Գնում ե) :

ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Ինչպես մի խընձոր՝ կես արած միջից,
Մըհեր ինքըն ե առաջիս կանդնած :
ՍՍՈՒՆ.—Մանավանդ հիմա՝ հոր շորըն հաղած :
ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Բայց հաստակող ե. ասածըն արավ
Ափո՞ս այն շորեր . . . վո՞նց խըլեց տարավ :
ՍՍՈՒՆ.—Զարժանալի յե, վոչ մի ահ չունի :
ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Տա աստված, իք հոր արժանի լինի :
ՍՍՈՒՆ.—Ասենք կըտրիմ ե, բայց շատ ե ջահել,
Մի՞թե կարող ե Մելիքին հաղթել :
ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Նըրա հաստակում մարդու ուժերը
Որ որի վըրա ավելանում են . . .
Իսկ հասակավոր մեղ պես ծերերը
Որեցոր ընկնում և թուլանում են :
Մելիքըն ինչըան ել ուժեղ լինի,
Առաջվան ուժը պակասած կը լինի :

(Ավում ե ձիու ուրախ խրխնջյուն: Մտնում ե Դավիթը՝
Խիստ ուրախ):

ԴԱՎԻԹ.—Լըսո՞ւմ եք, ինչպես ուրախությունից
Խըրխընջում ե իմ Քուռկիկ-Զալալին . . .
Վերջապես յելավ իր խալար բանտից,
Լույս-արեվ տեսավ, տեր ըզդաց մոտին . . .
ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Դավիթ, քանի վոր ասածըդ արիր
Լըսիր, մի բարի խորհուրդ տամ յես քեզ:
Ինչ վոր քեզ ասեմ, լավ միտըդ պահիր,
Յեկ դու փորձանքից հեռու կը լինես:
Տեր մի արացե, թէ քեզ պատուհաս
Կամ ձախորդություն մի որ պատահի,

Խաչ-պատարագի անունը կը տաս,
Նա քեզ փորձանքից պատ կը պահի,
ԴԱՎԻԹ.—(Համբուրելով ազ քեվի խաչը):
Տունը շեն կենա, հորեղբայր Հոնան :
ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Հա, մի աղբյուր ել կտեսնես ճամբի՛
Վոր հըրաշալի զորություն ունի .
Ով վոր լողանա այն ջըրի միջին,
Նա կը դորանա և նոր ուժ կառնի :
Հայրըդ ել յերբ վոր ճամբա կը գընար,
Կաթնաղբյուրի մեջ միշտ կը լողանար:
Յեկ յեթե դու եկ լողանաս այնտեղ,
Քառասնապատիկ կը դառնաս ուժեղ:
ԴԱՎԻԹ.—Վերջապես ահա լըսեցի քեզնից
Հայրական խոսքեր: Տուր պաղեմ ճեռըդ:
Սուրբ պիտի պահեմ ինչ ասացիր ինձ,
Յերկարացընի յերկինք որերըդ:—
Դեհ, մընաս բարյա՞վ, հորեղբայր Հոնան :
ԶԵՆ-ՀՈՆԱՆ.—Աստվածածինը քեզ լինի պաշտպան:
Հաջողակ լինես, թընամուն հաղթես,
Հըրեղեն սըրով խոտի պես հընձես:
Թող տերը վիրկի Սասումը քեզնով,
Յեկ, ինչպես առաջ, աղատ, ապահով,
Որ որի վըրա ծաղկի, շենանա,
Բարդավաճ լինի և պայծառ մընա:
(Որտավագիմ և համբուրելով Զենով-Հոնանի մեռքերը):
ԴԱՎԻԹ.—Իմ հորեղբայր Հոնան . . .
Դու արժանացըրիր ինձ քո որչնության . . .
Վերջապես դու ինձ հայրություն արիր,
Հայրական սիրո կարոտ չթողիր:
Հիմա ինձ ներիր, թողություն արա,

Քեզ քամնի անդամ վիրավորել եմ,
 Բայց հավատա ինձ, աստված ե վըհա
 Հետո ինքըս ել միշտ զղջացել եմ:
 Ինչ կը վայելեր ինձ պես ջահելին
 Անպատվել քեզ պես ծեր ալելորին:
 Դու ել ինձ համար, մայրիկ, աղոթիր,
 Ու սրտանց բարի ճանապարհ մաղթիր:
 Շատ գըժվար զործի առաջ եմ կանդնած.
 Սըրա յելքից ե մեր բախտը կախված:
 ՍԱՐԻՍ.— Բարի՛ ճանապարհ: Թող Զարխափանը
 Ամեն տեղ լինի քո ոգնականը:
 (Կրկին լուս և ձիու լորինցունը):
 ԳԱՎԻԹ.— Կըրկին Խըրխընչաց Քուոկիկ-Զալալին,
 Հըրեղեն իմ ձին:
 Հիմա ուղղակի դեղի Սիղան-սար;
 ԶԵՆ-ՀՈՒՆԻՆ և ՍԱՐԻՍ.— Բարի՛ ճանապարհ, բա-
 րի՛ ճանապարհ:
 (Դավիթը հեռանում է):
 ԶԵՆ-ՀՈՒՆ.— Ա՛խ հազար ափսոս Քուոկիկ-Զալալին,
 Քուոկիկ-Զալալին.
 Ա՛խ, հազար ափսոս մեր գըլիի դյուտին,
 Մեր գըլիի դյուտին.
 Ա՛խ, հազար ափսոս կազեն-խարուկին,
 Կապեն-խարուկին.
 Ա՛խ, հազար ափսոս քամարը մեջքին,
 Քամարը-մեջքին.
 Ա՛խ, հազար ափսոս մեր թուր կայծակին,
 Մեր թուր կայծակին.
 Ա՛խ, հազար ափսոս խաչ պատարագին,
 Խաչ-պատարագին...

(Նկատելով, վոր հեռվից Դավիթը ականջ և դմում):
 Ա՛խ, հազար ափսոս Դավիթն անդին,
 Դավիթն-անդին...
 ԳԱՎԻԹ.— (Հեռվից) Հորեղբա՛յը, թե դու ինձպ չը-
 չիշեցիր,
 Գըլուխտ ուսիդ չըպիտի մընար...
 Բայց դու հիշեցիր, անունըս տվիր,
 Բախտավո՛ր յեղիր և կյանքըդ յերկա՛ր:
 (Գնում է):

ՊԱՏԱՆՅԱ Տ-ՐԴԻ

Սեղան-սարի մոտ մի բարձրության վրա կանգնած ե Դավիթը
 իր զինակիցների հետ: Այս բարձրության մոտից սկսում ե Մըս-
 քամելիիքի բանակը: Գիշերն անցնելու վրա յի: Արեւելան հորի-
 զուում խավարի բանձրությունը մեղմանում է, և յերկինքը
 զանով՝ ավելի ավելի հղկած արձարի փայլ և ստանում: Մըս-
 քամելիիքի ամբողջ բանակը խոր ժնի մեջ և և իր լուրջամբ
 գերեզմանատան սպավորություն և բոլոնում: Հեռվում շարժվում
 են միայն մի բանի սալերներ, դրանք պահպաններ են:

1-ին ԶԻՆՎՈՐ.— Ի՞նչ մեծ բանակ և արարիչ աստ-
 ված:
 2-րդ ԶԻՆՎՈՐ.— Ուր զոր նայում ես վըրան և
 խըրիած:
 3-րդ ԶԻՆՎ.— Կարծես թե մի ծով լինի անսահման:
 4-րդ ԶԻՆՎՈՐ.— Բոլորը ձերմակ ձյունի են նըման:
 ԳԱՎԻԹ.— Հեյ-վա՛խ, ընկերներ,
 իմ քաջ կտրիներ,
 Այս վըրանները թե լինեն բամբակ
 Ու մենք թեժ կըրակ,
 Ելի չենք կարող բոլորին այրել,
 Թու սըրանք լինեն զարնան դառնուկներ,

Մենք քաղցած դայլեր,
 Ելի չենք կարող բոլորը մաքրել:
 3-րդ Զինվոր.— Հիմա ամենքը պինդ մրակում են:
 4-րդ Զինվոր.— Պահապանները միայն արթուն են:
 1-ին Զինվոր.— Հարմար միջոց ե՛ յեկեք հարձակ-
 լենք
 Յեկ բանակի մեջ շրմոթմունք զըցենք:
 Մինչև կը զարթնեն, զենքերը կառնեն,
 Մենք կեսը բըրթած կը լինենք արդեն:
 ՊԱՎԻԹ.— Մենք գողե՞ր ենք, զոր գողերի նըման
 Հարձակում զործենք թընամու վըրան,
 Վոր հետո կանդնեն ասեն մեր դիմաց.
 «Դավիթ զող յեկալ, Դավիթ զող զընաց»....
 Վո՞չ, թողեր առաջ յես խմաց անեմ,
 Վոր զարթնեն քընից և պատրաստ լինեն:
 (Բարձրաճայն գոչում ե):
 Ե՞տ, վե՞ր կացեք,
 Արթուն կացեք.
 Ով արթուն ե, թո՞ղ ձին թամքի,
 Ով ձին թամքեց, թո՞ղ զենք ասնի,
 Ով զենքն առաջ, թո՞ղ ձին հեծնի:
 1-ին Զինվոր.— Ի՞նչ իրարանցում...
 2-րդ Զինվոր.— Ինչպե՞ս իրոնվեցին...
 3-րդ Զինվոր.— Ի՞նչ զոռում-զոչում...
 4-րդ Զինվոր.— Գողերն հընչեցին...
 ՊԱՎԻԹ.— Պատրաստ կացե՞ք ահեղ կըովին.
 Դավիթն յեկալ ձեր հավարին...
 Դե՛, իմ քաջե՞ր, հանե՞ք սըրեր,
 Վըրա տվեք, իմ կարիճներ,
 Զահել-ջիւան իմ ընկերներ...

(Դավիթը ձին հեծած և կայծակի-քուրք ձեռքին շպշողաց-
 նելով տաջ և ընկնաւմ. նրա յետելից զինակիցները: Մըերք-
 ների մոտ մնում են միայն մի ժամի պահապաններ, վորոնք գիւ-
 տում են կուիլը և իրենց զգացումները հաղորդում իրաք:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Բա՛չ, Դավիթին մըտեկ... Քուր-
 կիլ-Զալալլին
 Թըռչում ե ասես յերկընքի տակին...
 2-րդ ՊԱՎԱՊԱՆ.— Այս ի՞նչ ե, կարծես կայծակ և
 լըրփում:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Դավիթի թուրըն և այնպես Փըր-
 Փըրում:
 2-րդ ՊԱՎԱՊԱՆ.— Հասավ, լայ հասավ անիբալներին:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Ընկերները ել ահա մոտեցան:
 2-րդ ՊԱՎԱՊԱՆ.— Գուրիներ ե վոր թըռչում են գետին:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Տե՛ս միանդամից քանիսըն ընկան:
 2-րդ ՊԱՎԱՊԱՆ.— Մերոնք կանգուն են:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Ինչպե՞ս հնձում են...
 2-րդ ՊԱՎԱՊԱՆ.— Մըրար բանակում սարսափ ե ընկել.
 Այս տեսակ աղետ հեչ չելի տեսել:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Ինչպե՞ս են մերոնք նրանց հա-
 լածում...
 իսկ և իսկ նըման ուժեղ փոթորկի,
 Վոր վաշնարների հոտերը քըռում
 Խառնում ե իրար, իրարով տալի:
 2-րդ ՊԱՎԱՊԱՆ.— Բայց ո՞ւր ե ինքը Մըրամելիքը:
 1-ին ՊԱՎԱՊԱՆ.— Զե՞ս տեսնում նըրա կանաչ
 վըրանը:
 Ամենից մեծը և զեղեցիկը.
 Այնտեղ ե հիմա Մըրար իշխանը:

2-րդ ՊԱՀԱՊԱՆ.— Այն ի՞նչ ծերուկ է Դավթին
 մոտենում։
 1-ին ՊԱՀԱՊԱՆ.— Դավթիթը նըրան ձեռքով է անում։
 2-րդ ՊԱՀԱՊԱՆ.— Վա, հե՞ր կըոիվը դադարեց
 հանկարծ։
 1-ին ՊԱՀԱՊԱՆ.— Կարծեմ ծերուկըն ինչ վոր բան
 ասաց։
 2-րդ ՊԱՀԱՊԱՆ.— Յերևիկի խընդրեց իվենց խընայել
 Յեկ հաղթությունը տարած համարել։
 1-ին ՊԱՀԱՊԱՆ.— Շուտ խելքի յեկան, թե չե բանակում
 վոչ վոք կենդանի չը պիտի մընար.
 Բոլորը պիտի փըովեյին դաշտում,
 Յեկ դաշտըն արյան ծով պիտի դառնար։
 2-րդ ՊԱՀԱՊԱՆ.— Գալիս են... Տեսնենք ի՞նչ լուր
 են բերում։

(Ի՞իչ հետո զալիս է Դավթիք մի ծերումու հետ։ Գալիս են
 և զինակիցները։ Խաղաղուրյան միջնորդը մի զառամյալ ալիվոր
 և յերկայն և փառավոր մորութով)։

ԴԱՎԻԹ.— Տեղ տըվիք ծերին։ Պապիկ, մոտեցիք։
 Դադրա՞ծ ես։ Առաջ քիչ հանգստացիք։
 Մի ասա, տեսնեմ, այդ ծեր հասակում
 ի՞նչ դործ ունիս տաք ճակատամարտում։
 Յեղ ի՞նչ վայել և ձեռքդ թուր առնել։
 Յեկ տըմտըմբալով կըովի դաշտ յելնել։
 ԾԵՐԼ.— Ա՛խ, հազա՞ր անեծք Մըսրամելիքին։
 Զոռով ե բերել, առանց մեր կամքին։
 ԴԱՎԻԹ.— Ի՞նչպես թե զոռով։
 ՆԵՐԼ.— Հա, Դավթ, զոռով։
 Ինչքան դառամյալ ծերուկներ կային,
 Վոր թուրըն հաղիվ կարող են բըոնել,

ինչքան նորելուկ տըղաներ կային,
 Վորոնք խաղերից դեռ չեն կըշտացել,
 Գանով, բըուունցքով
 Յեկ մըտրակներով
 Այստեղ քըշեցին։
 Մըսուր մնացին
 Միայն խեղձ կանայք,
 Փոքրիկ յերեխայք։
 ԴԱՎԻԹ.— Այս, յես տեսա կային թե ծերեր
 Յեկ թե նորելուկ շատ պատանիներ։
 ԾԵՐԼ.— Մատա՞ղ քո հոգուն, մենա՞մ արքվեր,
 Դըրանց մեղքի տակ մի մըտնիր, Դավթիթ։
 Վորը կա թաղա փեսա յե—հարսին
 Թողել և իր տան արցունքն աչքին։
 Վորը՝ ճար—ճըրագ վորդի յե— իր մոր
 Թողել և մենակ խեղձ ու սպավոր։
 Յեկ վորը՝ մանրիկ իր ճագուկներին
 Անտեր—անտերունչ հանձնել և բախտին...
 Դու հե՞ր յես այդ խեղձ մարդկանց կոտորում
 Յեկ մեզ, մեր վորդոց ու մեր թոռներին
 Կայծակի թըրովլոդ անխընա փըրթում
 Առատ հնձի պես թափում ես զետին...
 Քեզ ի՞նչ են արել այդ շիվարները,
 Այդ խեղձ ու կըրակ արարածները...
 Թե քեն ունիս դու, քո սըրտի քենը
 Հանիր անիրակ Մըսրամելիքից։
 Մեղ ել և նեղում այդ անորենը,
 Մենք ել ենք այրված նըրա չար ձեռից։
 Իսկ մեզ խընայիր, խընայիր Դավթիթ,
 Դու կանաչ—կըտրիճ Սասմա քաջ իպիթ։

Տե՛ս, ծեր տեղովս չոքած առաջիկ՝
Վուշերը ընկած փեշըդ պազնում եմ,
Հատուկ աղաչում և պաղատում եմ—
Գրթա՛, վողորմիր, խընայի՛ր դու մեզ:
ԴԱՎԻԹ. — Վե՛ր կաց, ին՛չ ծերուկ, հերի՛ք լաց
լինես:

Կարծում ես թե շատ ուրախ եյի վոր
Յեսնում եյի յես թըրլիս տակ կանդնած
Անբեղ պատանի կամ ծեր ալեվոր՝
Ինչպես մեսելներ՝ ահից դունատված . . .
Բայց ի՞նչ անեյի . . . կըսվում տաքացած
Զեյի խընայում ձեզնից վոչ մեկին,
Ինչպես վայել ե պատերազմողին:

ԴԵՐԸ. — Մեղանում կա մի հին, լավ սովորություն,
Վորին Մըհերը միշտ կը հետեղիր.
Յերբ վոր մի հըսկա վոխ ուներ սըրտում,
Իր թըշնամու հետ այսպես կը վարվեր:
Կըսվի մեջ վոչ վոք չպիտի խառնվեր,
Այլ յերկու հոգով յերես առ յերես
Պիտի յելնեյին արձակ ասպարեզ.
Սովորությունըն այսպես եր ահա.
Միհնույնըն ել դուք արեք հիմա:

ԴԱՎԻԹ. — Մէծ ուրախությամբ ընդունում եմ այն,
Ինչ վոր ինձ, ծերուկ, առաջարկեցիր.
Բայց կը ցանկայի իմանալ միայն,
Քո՞ իդձն եր այդ, վոր ինձ հայտնեցիր,
Թե Մըրա տերը նույնպես կուղենար,
Վոր մեր կըսիմ այսպես վերջանար:

ԴԵՐԸ. — Յես յերաշխավոր կարող եմ լինել:
ԴԱՎԻԹ. — Ուրեմըն այժմ կարող եմ մեկնել:

Գընա և հայտնիր Մըրամելիքին,
Վոր ըսպասում եմ իր պատասխանին:
ԴԵՐԸ. — Հենց վոր չեփորի ձայնը կը լըսես,
Դա կոչի նըշան պիտի համարես:
(Ծերը գնում ե):

ԴԱՎԻԹ. — Աստված խընայեց խեղճ տղաներին
Յեվ այս ծերուկին ուղարկեց մեզ մոտ,—
Թե չե շատ մայրեր պիտի վողբային՝
Վորդոց տեսության հավիտյան կարուտ:
1-ին ԶԻՆՎՈՐ. — Բայց Դավիթ, զգուշ,
Թեեւ դու ունիս ուժ, կարողություն,
Բայց վախենում եմ, մի զուցե հանկարծ
Քո դեմ կազմել են դավագրություն . . .
2-րդ ԶԻՆՎՈՐ. — Թող համարձակվեն . . . Հապա այս-
տեղ մենք,
Ինչի՞ համար ենք, վո՞ր որվա համար . . .
Այնպիսի անգութե կոտրած կանենք,
Վոր վոչ տեսել ե, վոչ լըսել աշխարհ . . .
3-րդ ԶԻՆՎՈՐ. — Մենք բոշուս ել մի մարդու նըման
Մեր ազիլ Դավիթին կլինենք պահապան:
ԴԱՎԻԹ. — Իմ հավատարկիմ և քաջ լնիերներ,
Ախ, մատաղ լինեմ ամենքիդ հոգուն,
Կկործանվի նենդ, զորող թշնամին,
Քանի վոր ձեզ պես ընկերներ ունիմ:
(Թշնամու քանակից լավում են շեփորի ձայներ):
Նըշան արդին . . . Գե՛, մընաք բարո՞վ:
1-ին ԶԻՆՎՈՐ. — Տար մա՛կ մըրացուն, դու մեր լույս
արեվ:

ԴԱՎԻԹ. — Մարութա դանձը, ո՛վ թուր-կայծակին,
Յեվ դու աջ թեվիս Խաչ-պատարպին,

Ողնական յեղեք նորելուկ Դավթին:
(Բոլորոքյան) Ողնակա՞ն յեղեք:
(Լեռնիբի արձագանք) Ողնակա՞ն յեղեք:

ՊՍ.ՏԱԵՐ Գ.Ր.Դ

Մորամելիքի բանակը: Առաջնակողմում յերեվում և նրա վը-
քամբը, վորը տանձնացած և մյուս վրաներից և վերջիններից
տարրերվում ե իր մեծությամբ և կանաչ գույշով: Մուտքի
յերկու կողմում կանգնած են խափշիկ պահապաններ՝ զինված
յերկայն նիզակներով:

Մորամելիքը պատվիրներ և տալիս Կոորդինին և Զարյա-
դինին:

ՄՍՐԱՄ.—Դավթի ծուղակը ճարպիկ կը Հյուսեք բ-
վորպեսզի վոչինչ կատկած չտանի,
Յեկ իր գետնափոր բանտիցը յերեք
Զելի լույս—աշխարհ, արև չտեսնի:
Կը փորեք քասուն նետաշափ մի հոր,
Բերնին կը ձրդեք յերկաթյա մի թոռ,
Թաղիք կը փուեք թռոի յերեսին,
Վոր իսպառ ծածկվի մեր այս մհծ զաղանին
Յեկ յերը կը ձրդեք ճաշի սեղանը,
Կը տաք նըշանը:
ԿՈՍԲԱԴԻՆ.—Վըստահ յեղիր, տե՛ր: Գընանք:
Զարյադին:

(Կոորդինը և Զարյադինը գնում են):

ՄՍՐԱՄ.—Յերբ Դավթիթ կդա, քա՛ջ պահապաններ,
Կասեք ըստասի. յես քընած եմ դեռ:

(Մորա Մելիքը մտնում է վրանը: Քիչ հետո յերեվում և
գումարի հասած իր հրեշին մին, վորը մոտալում կոփը նա-

խազզալով՝ խրխնջում ե: Դավթը կամք և առնում վրանի
մուտքի առաջ:

ԴԱՎԻԹ.—Մըսրա Մելիքին կանչեցեք այստեղ,
Վոր ըսկըսենք մեր կըոփիլոն ահեղ:
Է-ին ՊԱՀ.—Նա քընած և դեռ. յոթն որ և քընում:
Զ-րդ ՊԱՀ.—Յերեքըն անցավ, չորսն որ և մընում:
ԴԱՎԻԹ.—Ել քընիլ չըկա.

Կանչեցեք թող դա:
Թէ անմահ և նա, յես մահ եմ բերել,
Թէ անդըսող և, գրողն եմ բերել:
Է-ին ՊԱՀ.—Նա չի արթնանա,
Մինչեւ վոր քընից լավ չկըշտանա:
ԴԱՎԻԹ.—Զարթեցրել ընրան տաքացրած շեշով,
Թէ այդ ել չողնեց—գութանի խոփով:
Շուտ արեք, թէ չի խըիցի սըրով:

(Զերք տանում և սրին: Պահապանները սարսափած ներու-
նե մտնում վրանը: Քիչ հետո կրկնի դուրս են գալիս. յերե-
սում և Մորամելիքը, Դավթին տեսնելում պես, հապատ փը-
չում և նրա վրա):

ԴԱՎԻԹ.—Քո փըչելովը Դավթ վայր ընկավ:
ՄՍՐԱՄ.—Քո հանցանքներըն անթիլ են, անբավ:
ԴԱՎԻԹ.—Ասա՛ զեթ մեկըն իմ հանցանքներից:
ՄՍՐԱՄ.—Մընչերի տղա, լավ մտիկ տուր ինձ:
Քեզ ո՞վ իրավունք տըլեց նորողել
Մարութա սարի Զարյադափան վանքը,
Վոր քանդել եմ յես, ավերակ դարձրել—
Ահա՛ առաջին քո մեծ հանցանքը:
ԴԱՎԻԹ.—Դու կարծում եյիր, այն ավերակը
Նույն խեղճ դըրության պիտի մընար,
Յեկ խրժգուժ դորձիդ սեվ հիշատակը

Սերունդից սերունդ անցնելը՝ դարեղաբ . . .
Վոչ, վերականգնեց Մարտոթա դրվին
Պայծառ տաճարը անխախտ, անսասան . . .
(Լավում և զանգերի ձայնը):

Ահա լսո՞ւմ ես— վանքի զանդերը . . .
Նըրանց ձայն տըլին բոլոր ձորերը . . .

ՄՄՐԱՄ.— Յես այդ ձայները շուտով կը կըտրեմ։
Տաճարը նորից քար ու քանդ կանեմ։
ԴԱՎԻԹԻ.— Քանի վոր շունչ կա Դավթի բերանում,
Մարտոթա վանքը կը մնա կանդուն։
ՄՄՐԱՄ.— Քանի՞ կյանք ունիս Մըհերի տըլա,
Վոր հըպարտ կանզնած՝ խոսում ես անահ։
Ա՛յ ձեզ չը տեսնված համարձակություն . . .
Բայց յես կը կոտրեմ քո հպարտություն։
Դու յոթը տարվա իմ խարջը պահե՞ս
Յեվ հավատարիմ իմ ծառաներին
Բաղմության առաջ ծեծե՞ս, անարգե՞ս,
Յեվ առնես կոտը առա ճակատների՞ն . . .

ԴԱՎԻԹԻ.— Այո, արել եմ և չեմ ուրանա։
Բայց գեռ զլիամփոր մի գործ ե մընում,
Վորի համար յես քեզ մոտ եմ յեկել։
ՄՄՐԱՄ.— Դու կամենում ես քո ո՞ւժը վորձել։
Շատ լավ, կը փորձենք։ Քիչ համբերություն՝
Դավթի, մենք ունինք մի սովորություն—
Կովելուց առաջ սեղանի նըստել
Յեվ ընկերաբար աղ ու հաց ուտել։
Կուզե՞ս հետեւել մեր սովորության։
ԴԱՎԻԹԻ.— Յես հակառակ չեմ հյուրասիրության։
(Գալիս են կոստանդնուպ և Զարխանինը):

ՄՄՐԱՄ.— Ուրեմն զընա կոստանդնի հետ։

Յես ել կալիս եմ. և իսկույն և յեթ։
(Կոստանդնուպ տաշնորդում և Գալիքին պատրաստած տեղը:
Կորանց հետեւից զնում և և Զարխանինը):

Այսպես կը խարեն անխելք հիմարին։
Գընա, մոտեցիր, քո գերեզմանին։
Հաշված և կյանքիու ամեն մի բոպեն։

(Մտնում են Խամբլ-Խանում և Լեյլա):
ԼԵՅԼ.— Հայրիկ, Դավթի հետ, թե ինձ կը սիրես,
Կըսիվ չմանես։

ՄՄՐԱՄ.— Ինչո՞ւ, աղջիկը։ նո՞ր բան ես լըսել։

ԼԵՅԼ.— Մի սարսափելի յերազ եմ տեսել։

ՄՄՐԱՄ.— Իսկ յես տեսել եմ մի շատ լավ յերազ։
Յեվ յեթե պատմեմ, գու կուրախանաս։

ԼԵՅԼ.— Վո՞չ, հայր, ինձ լսիր. սիրտը շատ կախ ե։
ՄՄՐԱՄ.— Իսկ իմը, Լեյլա, այնպես ուրախ ե։

ԼԵՅԼ.— Դու ծերացիւ ես, իսկ Դավթի— ջահել։
Նա շատ ձարպիկ ե, կարող և հաղթել։

ՄՄՐԱՄ.— Ինձ հաղթողը դեռ մորից չե ծընված։
Ո՞վ ե Դավթիթը— մի խեղճ գառնալած։

ԼԵՅԼ.— Ախ, նըրա մասին ինչի՞լ են պատմում . . .

ՄՄՐԱՄ.— Որինակ, ասա՛, յես նոր եմ լըսում։

ԼԵՅԼ.— Քառսուն հարամի գեվերին հաղթել,
Զանդակ և զրբկել կոպալի զարկով։

Քառսուն առյօւծի ըերան և պատռել
զողպատի նըման ամուր ձեռքերով։

ՄՄՐԱՄ.— Ի՞նչ կա, վոր. յես ել կարող եմ անել։

ԼԵՅԼ.— Ասում են, նըրա աջ թեփի վըրան
կա մի զորավոր, Խաչ-պատարադի,

Վոր պողովատ և յերկաթի նըման։
Արդելք և լինում թուր ու նիզակի։

ՄՍՐԱՄ — Յես ել շատ ունիմ այդ թըլիսմներից,
 Յեվ պատահով եմ պատահարներից:
 ԼԵՅ — Մի ձի ել ունի, վոր, ինչպես կայծակ,
 Կըտրում ե ողը և թըռչում հեռուն,
 Արձակված նետից ավելի արագ
 Հասնում ե իր գեմ կանդնած թըջնամուն:
 Իսկ նըրա կըտրուկ հըրեղեն սուրը,
 Հազիվ մի անգամ շարժում ե կուռը,
 Յերկաթե ձողը միջից կիսում ե:
 ԱՄՍՐԱՄ — Իսկ իմ կոպալը ջարդում անցնում է:
 ԻՍՄԻԼ — Մելիք, աղջիկը լավ բան ե ասում.
 Դու նըրա խոսքին իզուր չես լըսում:
 ՄՍՐԱՄ — Ինչո՞ւ, ասա՛ ինձ, յես ել իմանամ:
 Գուցե գու յել ես վատ յերազ տեսել:
 ԻՍՄԻԼ — Յերեխաների սիրտը շատ անգամ
 Կարողանում ե նախազուշակել
 Ամեն մի վրտանդ, ամեն մի աղետ:
 Ի՞նչ գործ ունիս զու Սասմա ծըռի հետ:
 ՄՍՐԱՄ — Վոչ, յերկուսըդ ել յերազ եք տեսել.
 Զուր մի աշխատեք, չեք կարող պահել:
 (Յերեխում են կոստադինը և Զարխադինը, յերկուսն ել ան-
 չափ ուրախ):
 ՄՄՍՐԱՄ — Ա՛յ, սա մեզ համար բերում ե մի լուր.
 Ի՞նչ լուր ե, տեսնենք, ուրա՞խ թե տըխուր:
 Դավիթի ի՞նչ յեղավ:
 ԿՈՍ — Դավիթը զընաց և անհետացավ:
 ԼԵՅ — Այժմ ո՞ւր ե նա:
 ԿՈՍ — Մի խոր ձորի մեջ փոված ե հիմա:
 ՄՍՐԱՄ — Կեցցե՛ կոստադին: Այդ գործի համար

Բնծաներ կը տամ անթիվ անհամար:
 ԼԵՅ — Ուրեմըն... Դավիթին գըցեցիք հո՞րը:
 ՄՄՍՐԱՄ — Այո, թող գընա դանդատվի հորը:
 ԿՈՍ — Ի՞նչ միամիտ եր... վոչիարի նըման...
 Սեղանի ծայրին հաղիվ մոտեցավ,
 Վոտի տակ փըլվեց, ու գըլիվ վըրան
 Ակընթարթի մեջ գետինըն անցավ:
 ԼԵՅ — Հայր իմ, ուրեմըն ել յերկյուղ չկա՞:
 ՄՄՍՐԱՄ — Ի՞նչ յերկյուղ... Հորում կը վըրտի հիմա:
 Դավիթ ել չկա:
 Քո պայծառ աստղը, Սասում, ինավարեց,
 Դալիս եմ ահա յես քո հավարին...
 Դավիթին աշխարհի յերեսից ջընջվեց,
 Անտեր մընացիր, ո, վայ քո որին...
 Լա՛ց, Սասո՞ւմ, վողբա՛
 Դավիթ ել չկա:
 Դե՛հ, ուրախացեք, իմ զորականներ,
 Թըմբուկ զարկեցեք, հնչեցրեք փողեր...
 (Կավում ե քմբուկի ձայն և փողահարություն):
 Հրամայում եմ ձեզ — վաղ առավոտյան
 Ամեն տեղ սըփոել ահեղ կոտորած,
 Հըրդեհել դյուղեր, քանդել Զարխափան՝
 Մարութա գըլիին նորից կառուցված...
 Պատերազմական հարուստ ավարից
 Դուք առատ բաժին կը ստանաք ինձնից.
 Մերըն են Սասմա բոլոր դանձերը,
 Յես եմ այսուհետ և նըրա տերը:
 Զգիսչել միայն գեղեցիկ կանաց
 Յեվ կույս աղջկանց.

Դըրանք բոլորը մեղ են պատկանում,
Դըրանց կը փակենք մեր հարեմներում:
Իսկ տղամարդկանց՝ թե ծեր թե ջահել՝
Անիշնա վըրթել ոըրի անցընել...
Մեր վըրեժը կուշտ կը լուծենք հիմա.
Դավիթն ել չկա՛:

ՊԱՏԱԵՐ 10.ԹԴ

Մարամելիիքի բանակը մի ուրիշ կողմից, բաց ասպարեզ:
Սեղան-սարի գլխից լսում ե Զենով-Հոնանի վորոտայն կոչը:
ԶԵՆ-ՀՈՆԱՆԻ ԶԱՅՆԻ. — Վո՞րտեղ-ես, Դավի՛թ,
Ի՞նչ յեկալ զըլիսիդ...
Հեշի՛ր Մարութա բարձր Աստվածածին,
Հեշիր աջ թեփիդ Խաչ-պատարագին...

(Քիչ հետո Մարամելիիքի բանակի մեջ սկսում են աղաղակեր. Գավի՛րը, Դավի՛րը... Մարամելիիքը դուրս ե գալիս իր վըրանից՝ զարմացած և անհանգիստ: Հեռվից շտապով զալիս և կորադիմք՝ սարսափահար և մեռելի պես գրնատ):

ՄՍՐԱՄ. — Այս ի՞նչ աղմուկ ե լրսվում այնտեղից:
ԿՈՍ. — Տեր իմ... Դավիթը... յելել ե հորից...
ՄՍՐԱՄ. — Դավի՛թը... ի՞նչպես... և ի՞նչ հընար-
քով...

ԿՈՍ. — Մենք ել չգիտենք, թե ինչպես և ով...
Կարող եր նըրան հորիցըն հանել:
ՄՍՐԱՄ. — Յես հասկանում եմ... պարան են զցել...
Նրան ողնել են... Դավաճանությո՛ւն...
Դու պիտի զըտնես այդ չարագործին.
Իմ առաջ զո՞ւ յես պատասխանատում...
Գըտիր, յեթե վո՞ւ ո, վա՞յ քո որին...
ԿՈՍ. — Տե՛ր, մի վըրդովիր, յեղիր ապահով,

Վո՞ր հանցավորը կը գըտնվի չուտով:
ՄՍՐԱՄ. — Դե խսկույն և յիթ, զտէք և բերեք:
(Կորպադիմք կամենում ե զմալ, նրա հանդեպ յերեխում ե
զավիթք՝ սաստիկ զայրույթից աչքիրն արնակալած):
ԴԱՎԻԹ. — Կանգնեցեք անշա՞րժ... Տեղից չը շաժ-
դիվիթ... կանգնեցեք անշա՞րժ... Տեղից չը շաժ-
դիվիթ...

Ամո՞թ, բյո՞ւր ամոթ Մարամելիիքին,
Աշխարհահոչակ, անհաղթ հսկային...
Կըովելուց առաջ լավ պատվեցիր ինձ.
Շընորհակա'լ եմ քո աղ ու հացից:
Բայց հեշտ կամեցար ինձնից աղատմել...
Դե, շընորհ արա մեյդանը յելնել:
ՄՍՐԱՄ. — Կելնեմ. քեշնից վախեցող չկա.
Լեզուդ քե՛զ քաշիր, Մըհերի տըղա:
ԴԱՎԻԹ. — Յեթե ինձանից բնավ վախ չը կար,
ինչո՞ւ ուրեմն դու չը կամեցար
Բայց կըովում հաղթել քո ախոյանին,
ինչուս վայել ե աղնիվ զինվորին...
Ալլ ցած հոգի, վատ դողի նըման,
իմ զեմ լաբեցիր զարշելի զարան...
Մի՛ նայիր այնտեղ—այն բըլի գըլիմին
Քաջարի դունդը պատրաստի կանգնած.
Նըրանք ինձ խընդրում, թախանձում եյին,
վոր հըրամայեմ վըրա տալ հանկարծ,
Յերբ քո բանակն առավոտյան դեմ
Մըրափ եր մտել՝ անփույթ և անզեն...
Բայց յես չը թողի հարձակում գործել
Աղնիվ կըտրիմին վայել ե այսպես:
Բայց դու ի՞նչ արիր իմ զեմ, սեվերե՞ս...
ՄՍՐԱՄ. — Լըոփի, դու ուամիկ, տըխմար խողարած,

ինչպե՞ս ես խոսում իմ առաջ կանզնած :

ինձ համար մի մեծ պարծանք չեր, վոր յես .

Կըսիվ անեյի և հաղթեյի քեզ :

Դա քեզ համար մեծ պատիվ կը լիներ :

ԴԱՎԻԹ. — Ինչի՞ համար են այդ գոռող խոսքեր .

Թե պիտի կըովես, ըսկըսենք չուտով .

Ինչ վոր ասացիր, ցույց տուր և դորժով :

ՄՍՐԱՄ. — Ցույց կը տամ իսկույն :

Թող առաջ դընամ

Զըրահըս հազնեմ, պատրաստվեմ և դամ :

ԴԱՎԻԹ. — Քեզ ըսպասում եմ անհամբերությամբ :

(Մարամիլիք գիտ և դեպի իր ձրանք: Դավիթը հանում է սուրբ և նայում):

Ո՛վ թուր-կայծակի, հավատարմությամբ

Ծառայիր զու ինձ, Մըհերի վորդուն,

Ինչպես վոր իմ հորն եյիր ծառայում :

(Յերեւան են խամիլ խանումն ու Լեյլան և մոտենում են Դավիթին):

ԻՍՄ. — Դավիթ, զավակըս, ինձ չե՞ս ճանաչում .

Յես քո հարազատ մայրն եմ, Դավիթ:

ԴԱՎԻԹ. — Ի՞նչպես հավատամ յես քո խոսքերիդ ...

Յերանի չե՞ վոր մայր ունենայի :

Մայր լիներ, ինչո՞ւ վորբ կը մընայի :

Յեթե մայրըս ես, ինչպես ասացիր,

Հապա հե՞ր դու ինձ մայրություն չարիր :

Յես վորբ եմ յեղել հորից ու մորից :

ԻՍՄ. — Կոչ, թեև հեռու եյինք իրարից,

Բայց ուշ ու միտքըս քեզ հետ և յեղել,

Քեզ միշտ սիրել եմ, կարոտդ քաշել :

ԴԱՎԻԹ. — Յեթե դու, իրավ, ինձ սիրում եյիր,

Ինչո՞ւ ուրեմըն ինձ հեռացըրիր,

Թողիր, վոր մընամ անհեր ու անմեր,

Ամենքի աչքից ընկած ու անտեր...

Կամ ի՞նչպես ե, վոր դու հանձըն առար

Մըրամելիքին զընալ կընության,

Վոր իմ հոր ծաղկած յերկիրըն իսպառ

Մասնեց իր զորքի ասպատակության...

ԻՍՄ. — Յեթե դա կախված լիներ իմ կամքից,

Զեյի թողնի քեղ բաժանել ինձնից :

ԴԱՎԻԹ. — Խսկ զո զիտէյի՞ր, ինչպես նենդաբար

Վըճուել եյին ինձ կենդանի թաղել.

Ինչ արիր վորդուդ վըրկության համար.

Հարազատ վորդուդ այլպե՞ս ես սիրել...

ԻՍՄ. — Վա՛յ, չուխս աչքերով թող ես կուրանամ,

Յեթե միտայն ինձ հայտնի յե մի բան:

Դավիթ, զավակըս, կըուիլ մի՛ արեք.

Հաշովեցեք և մեզ ուրախացըրեք:

ԴԱՎԻԹ. — Այդքան ցավո՞ւմ ես քո մարդու համար:

ԻՍՄ. — Յավում եմ թե քեղ, թե նըրա համար:

ԱԵՅ. — Ա՛յս, կանաչ կըորիծ Սասմա քաջ իդիթ,

Հաշովիր հորըս հետ, մեռնեմ արեվիդ:

(Գալիս և Մարամիլիք գրահակորված, գլխին մետայս սաղովարտ, մի ձեռքում ահազին վահան, խսկ մյուս ձեռքում ծանր գուրզը):

ՄՍՐԱՄ. — Յեթե պատրաստ ես, դուրս յեկասպարեզ:

ԴԱՎԻԹ. — Վաղուց պատրաստ եմ, ըսպասում եմ քեզ:

ՄՍՐԱՄ. — Դու անցիր այն կողմ, խսկ յես—այստեղ:

Պից:

(Դավիթն անցնում է):

Առաջին զարկը պատկանում ե ինձ:

ԴԱՎԻԹ. — Յերկրորդ և յերրորդ հարվածըն ել քեզ,
Յեթե առաջին անդամ վըրիպես :

(Մարտնելիքը ձեռքով նշան է անում, փողերը հնչեցնում են:
Դավիթը նարակուրյամբ խուսափում է գործի հարվածից, վոր
մետում է Մարտնելիքն իր բոլոր ուժով: Յերկրորդ և յերրորդ
հարվածներն ել չեն հասում նպատակին):

ՄՍՐԱՄ. — (զայրույթով) Անիծյալ իմ դուրդ, դա-
վաճանեցիր...

ԴԱՎԻԹ. — Իմը և Հերթը; Տեղումըդ կանգնի՛ր:

(Դավիթը հանում է կայծակի սուրբ: Խամիլ-խանումը և
Կյալան միջամտում են):

ԼԵՅ. — Դամի՛թ, խընայի՛ր իմ հոր, մի՛ սպանիր...

ԻՍՄ. — Այս խեղճ աղջկան հօրից մի՛ զըրկիր...

ԴԱՎԻԹ. — Ե՛յ, աշխա՛րհ, աշխա՛րհ..., յերբ նա եր-
լըրփում,

Դուք, մայր և աղջիկ պապանձվել եյիք,
իսկ յերբ վոր Հերթը Դավիթին և հասնում,

Հանկարծ լաց յեղաք և հեկեկացիք...

Նըշանը տըլեք: (Փողերը հնչեցնում են):

Ո՞վ դու, Մարութա սուրբ աստվածին

Յեկ դու, աջ թեվիս խաչ-պատարագին,

Ոդնակա՛ն յեղեք...

(Դավիթը մի զարավոր հարված է տալիս հակառակորդին:
Մարտնելիքը մի զարհուրելի հառաչանի է արձակում և ընկ-
նում է զետին այնպիսի քափով, կարծես մի ահազին ֆարսի
Փլվեց և վայր ընկալ զետին):

ԼԵՅ. — (նշալով) Ա՛խ, հա՛յր իմ, հա՛յր իմ...

ԻՍՄ. — Ո, վա՛յ մեր գըլիմին...

ԴԵՐԼ. — Կեցցե՛ գոչեցեք. Կեցցե՛ Դավիթը...

ԱՄԵՆՔԸ. — Կեցցե՛ Դավիթը... Կեցցե՛ Դավիթը...

ԴԱՎԻԹ. — Մըսրա ժողովուրդ, դե, յերթաք բարով:
Զեղ համար մի նոր իշխան ընտրեցեք,
իմաստուն խելքով և զըթոտ ոըրտով,
Յեկ հաշտ ու խաղաղ կառավարվեցեք:
Աւրախացըլե՛ք կըրկին ձեր կանանց,
Զեր խեղճ մայրերին, վորդոց, աղջըկանց,
Վոր սեվ սղի միջ լալով շարունակ
Զեյին սղասում, վոր յետ կը դառնաք:
Զեր սուրբ վաթանը ես ձեղ եմ թողնում,
Զեղանից վոչինչ ես չեմ պահանջում:
Թող այսուհետեւ Սասում և Մըսուր
Մոռանան անցած որերը տըխուր,
Թող ծըլեն, ծաղկեն, մընան միշտ դալար
Սասում իր համար, Մըսուր իր համար:



Պատ-խմբագիր՝

Ա. Ի. Ֆ. ամազյան
կազմը, հեղինակի պուրակն,
գլխազարդը, վերջնազարդը և
սեխ-խմբագրությունը՝
Ա. Գ. ասպարյանի

Մրացրիչ՝

Ա. Թումանյան

Գլավիտի լիազոր՝ Զ—1169. Հրատ. 5090.

Պատվեր 882. Տիրաժ 3000.

Թուղթ 72×105. Տպագրական 51/5 մամուլ

Մեկ մամուլում 24.800 նշան.

Հանձնված և արտադրության 21/1 1940 թ.

Ստորագրված և տպագրութ. 5/VI 1940 թ.

Հայպետհրատի տպ., Յերևան, Լենինի, 65

36650

Արք. Ընդհան.



11063